ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ՎԱՆՔԸ



ԷՋՄԻԱԾԻՆ - 2018

685

ՆՎԻՐՎՈՒՄ Է

Ս. ՀՈՒՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑՈՒ

1400-ԱՄՅԱԿԻՆ



ՀՐԱՄԱՆԱՒ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

7(47.925)
Հ-42
հշ

Գրքատուն Սիրելի

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ՎԱՆՔԸ

5984

Ս. ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2018

ՀՏԴ 27-9:930
ԳՄԴ 86.37+63.2
Հ 422

Տպագրվում է երաշխավորությամբ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

Հ 422 Ս.Հռիփսիմե վանքը / Ա.Հարությունյան.- Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2018.- 84+8 ներդիր էջ:

Ուսումնասիրությունը նվիրված է Հայաստանի վաղմիջնադարյան ճարտարապետության գլուխգործոցներից Ս. Հռիփսիմե վանքի պատմավիմագրագիտական քննությանը: Մի քանի տասնյակ վիմագրերի բովանդակության հիմամբ ընթերցողին են ներկայացվում վանքի շինարարական, ապա նորոգչական աշխատանքները, ստացած նվիրատվությունները, խաչքարերն ու տապանաքարերը: Ագաթանգեղոսի «Պատմության» հետևությամբ անդրադարձել ենք նաև Ս. Հռիփսիմեի վարք-վկայաբանությանը: Հավելվածում ամփոփված է Մովսես Խորենացու՝ Հռիփսիմյաններին նվիրված երկու երկ՝ Հռիփսիմյանների պատմությունը ներկայացնող բնագիրը և Ս. Հռիփսիմեի ու նրա վկայակիցների հիշատակին ձոնված ներբողը:

Նախատեսված է աղբյուրագետների, հայ եկեղեցու պատմության հարցերով զբաղվողների և ընթերցող լայն հասարակության համար:

ՀՏԴ 27-9:930
ԳՄԴ 86.37+63.2

Տպագրվում է մեկենասությամբ
«ՍԱՐԳԻՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ISBN 978-9939-59-213-8
© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 7

Ս. Հռիփսիմեի վարք-վկայաբանությունը 10
Ս. Հռիփսիմե վանքի պատմավիմագրագիտական քննություն . 18
ա. Շինարարական արձանագրություններ 23
բ. Նվիրատվական արձանագրություններ 33
գ. Խաչքարեր և հիշատակագրություններ 40
դ. Տապանագրեր 43

ՀԱՎԵԼՎԱԾ

Մովսես Խորենացի, Սուրբ Հռիփսիմյանների պատմությունը . 49
Սուրբ Հռիփսիմեի և նրա վկայակիցների հիշատակին և նրանց նահատակությանը [նվիրված] ներբողյան՝ հրաշազարդ հորինվածներով 56

Օգտագործված գրականություն 79

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայկական վաղմիջնադարյան ճարտարապետության գլուխգործոցներից մեկը, որը հորինվածքային պարզ ու միաժամանակ խորը լուծումներով մշտապես դիտվել է իբրև անզուգական իր ժամանակակիցների կողքին, Վաղարշապատ-Էջմիածնի Ս. Հռիփսիմեն է: Կոմիտասաշեն տաճարը 2018 թ. բոլորում է հիմնադրման 1400-ամյակը, ուստի ավելի քան տեղին է հետադարձ հայացք նետել դարերի խորքից եկող վանական այս համալիրի պատմությանն ու աղբյուրագիտական հենքին:

Հայ մատենագիրները, ապա տեղագիրներն ու ուսումնասիրողները տարբեր առիթներով անդրադարձել են Հայաստանում քրիստոնեության ընդունման պատմությանը, Հռիփսիմյանց կույսերի նահատակությանը, Վաղարշապատում Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից առաջին մատուռ-վկայարանների հիմնմանը, ապա վերջիններիս տեղում եկեղեցիների կառուցմանը, սակայն առանձին համապարփակ ուսումնասիրություն երբևէ չէր նվիրվել այդ եկեղեցիների համալիր քննությանը: Միայն վերջերս ընթերցող հանրության դատին հանձնվեց տողերիս հեղինակի ստվար հատորը՝ նվիրված Վաղարշապատի վանքերի պատմավիմագրագիտական ուսումնասիրությանը (Ս. Էջմիածին, 2016): Այս աշխատության մի ամբողջ մաս հատկացված է Ս. Հռիփսիմե վանքին, որտեղ սրբավայրի պատմությանը զուգընթաց ներկայացրել ենք վանքի շրջակայքում տարբեր տարիներին իրականացված հնագիտական պեղումները, ի

հայտ եկած ուշագրավ շինություններն ու առարկաները, ապա վանքի պատմությունը շարունակել ենք վիմական վկայագրերի հիշատակմամբ՝ իբրև առաջնահերթ սկզբնաղբյուրներ (հրատարակված 73 վիմագրից 39-ն առաջին անգամ է դրվել գիտական շրջանառության մեջ):

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի և Հրատարակչական բաժնի տնօրեն Տ. Արարատ քահանա Պողոսյանի նախաձեռնությամբ կյանքի կոչված ներկա ուսումնասիրության հիմքում մեր նշված աշխատությունն է, պարզապես այստեղ փորձել ենք հնարավորինս դյուրընկալելի դարձնել հարյուրամյակներ գոյատևած վանքի անցյալի ուրվագիծը: Այս առումով շարադրանքում արվել են որոշակի փոփոխություններ. նախ մատենագրական սկզբնաղբյուրները վկայակոչելիս գրաբար բնագրերի փոխարեն օգտագործել ենք աշխարհաբար թարգմանությունները, վիմագրերի վերծանությունների վերահրատարակությունն անհարկի համարելով՝ ներկայացրել ենք միայն նրանց բովանդակությունը՝ նախորդ հրատարակությունների մատենագիտությունը հղելով տողատակում՝ Հրատ. համառոտագրությամբ: Դուրս ենք թողել բոլոր արձանագրությունների գրչանկարները, իսկ լուսանկարներից մի քանիսն ընտրել ենք խիստ անհրաժեշտության դեպքում: Կատարել ենք նաև կառուցվածքային փոփոխություն. մինչ վանքի պատմավիմագրագիտական քննությունը շարադրելը՝ նպատակահարմար ենք գտել Ագաթանգեղոսի «Պատմության» հիմամբ ներկայացնել Հռիփսիմյանց կույսերի, առավելապես՝ Ս. Հռիփսիմեի վարքվկայաբանությունը: Այնուհետև, իբրև երկրորդ մաս, տրվում է վանքի պատմական նկարագիրը՝ վիմագրերի բովանդակության զուգորդմամբ, որոնք ևս բաժանել ենք ենթամասերի՝ շինարարական, նվիրատվական վիմագրեր, խաչքարեր և հիշատակագրություններ, տապանագրեր: Գրքի հավելվածում ամփոփել ենք պատմահայր Մովսես Խորենացու՝ հանրությանն

առավել քիչ հայտնի աստվածաբանական երկերից երկուսը՝ Հռիփսիմյանների պատմությունը ոչ Ագաթանգեղոսի «դրվագներով» ներկայացնող բնագիրը, ինչպես նաև Ս. Հռիփսիմեի և նրա վկայակիցների հիշատակին ձոնված հրաշալի ներբողը: Վերջում տեղ է գտել նաև օգտագործված գրականության ցանկը:

Աշխատության այսօրինակ կառուցվածքի հիմնական նպատակն է նյութը մատչելի և պատկերավոր մատուցմամբ հասանելի դարձնել ընթերցող հասարակության լայն ու տարբեր շրջանակներին: Լիահույս ենք, որ այն մեզ հաջողվել է, և գիրքը կծառայի ի նպաստ հայ մշակույթի ու նրա քրիստոնեական ակունքների:

Արսեն Հարությունյան
պատմական գիտ. թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Մաշտոցյան Մատենադարան
28.04.2018

Ս. ՀՌԻՓՍԻՄԵԻ ՎԱՐՔ-ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում քրիստոնեության ընդունման ու տարածման պատմությունը՝ ներառյալ Հռիփսիմյանց կույսերի նահատակությունը և Ս. Գրիգոր Լուսավորչի վարդապետությունն իբրև Հայոց դարձի առանցքային իրադարձություն, ներկայացված է Ագաթանգեղոսի «Պատմության» մեջ: Իհարկե, Գայանյանց և Հռիփսիմյանց կույսերի վարքն առանձին տեղ է գտել նաև Հայսմավուրքում և վարքաբանական գրականության էջերում (Մկրտիչ Ավգերյան, Շնորհք Գալուստյան և այլք): Ներկա աշխատության ստեղծման շարժառիթն ու նպատակը հաշվի առնելով՝ կարևոր ենք համարում վերստին անդրադառնալ Հայաստանում քրիստոնեության համար մարտիրոսացած մեր սուրբ վկաներին՝ ի դեմս Հռիփսիմյանց կույսերի: Ինչպես նշեցինք, նրանց վարքն առավելապես ամբողջական է Ագաթանգեղոսի երկում, ուստի մեր խոսքը շարադրելիս հիմք ենք ընդունել հենց հիշյալ աղբյուրը:

Տրդատ Գ. Արշակունու (287-330) թագավորության ժամանակաշրջանը հայ ժողովրդի պատմության մեջ նշանավորվել է իբրև մեր պետության ու հավատի միասնականության, նոր ըմբռնումների ու պայքարի հավաքականության շրջափուլ: Պարսից տերության դեմ թագավորի մղած տևական մարտերն ընթանում էին երկրի ներսում կատարվող կրոնական հալածանքներին զուգընթաց: Արդյունքում Խոր Վիրապում էր փակված Հայաստանում քրիստոնեության քարոզիչ Ս. Գրիգոր Լուսավորիչը, իսկ երկրի մեծավորներին թագավորից հրահանգ էր տրված հայտնաբերել և պատժել աստվածների

պաշտամունքը քարկոծող անհատներին, ինչպես որ ինքը չէր խնայել անգամ իր սիրելի Գրիգորին: Ահա այս պայմաններում է հյուսվում նաև Հռիփսիմյանց կույսերի պատմությունը: Առիթը՝ Հռոմի Դիոկղետիանոս կայսեր համար կին ընտրելն էր, որի նպատակով մի խումբ հմուտ նկարիչներ շրջում են տերության տարբեր վայրերում և ինչպես հաղորդում է Ագաթանգեղոսը. «Այդ ժամանակ գալով Հռոմ քաղաքը՝ գտան կույսերի մի արգելավանք, որոնք լեռներում մեկուսացած, բուսակեր, ժուժկալ, պարկեշտ և սրբանվեր կանայք էին, քրիստոնեական հավատքով լի, որոնք գիշեր ու ցերեկ և ամեն ժամանակ փառավորությամբ ու օրհնությամբ իրենց աղոթքը արժանավորապես դեպի վեր առ Աստված էին առաքում: Նրանց գլխավորի անունն էր Գայանե, որն ուներ մի սան՝ թագավորական տոհմից և աստվածապաշտ մարդու դուստրերից, որի անունն էր Հռիփսիմե:

Երբ եկան հասան, բռնությամբ մտան առաքինի կանանց սուրբ կայանը և տեսնելով պարկեշտագեղ Հռիփսիմեին՝ նրա սքանչելի տեսիլքով ապշած, զարմացած՝ նկարը տախտակի վրա նկարեցին և թագավորին հասցրին»[1]:

Տեսնելով Հռիփսիմեի գեղեցկությունը՝ թագավորն աննկարագրելի ցանկությամբ համակված հարսանիքի օր է նշանակում, հրավերքի նպատակով դեսպաններ ուղարկում տարբեր երկրներ: Զգալով մոտալուտ վտանգը՝ կույսերը Գայանե մայրապետի գլխավորությամբ աղոթք են բարձրացնում առ Աստված. «Տեր տերանց, Աստվա՛ծ աստվածոց, հավիտենական Աստվա՛ծ, Աստվա՛ծ երկնքի, Աստվա՛ծ անճառ լույսի, որ ամեն ինչը հաստատեցիր քո խոսքերով, ստեղծեցիր երկինքն ու երկիրը և նրանց բոլոր զարդերը, մարդը կերտեցիր երկրի

[1] **Ագաթանգեղոս**, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները **Արամ Տեր-Ղևոնդյանի**, Երևան, 1983, էջ 85 [138-139] (այսուհետև նշվում է միայն բնագրային հոդվածի համարը):

հողից ու իմաստուն դարձրիր, բազմացրիր նրան երկրի վրա և բոլոր դարերում օգնական եղար նրանց, որ քեզ հուսացին»[2]:

Հայցելով Աստծո օգնությունը՝ Գայանեն իր սան Հռիփսիմեի և մյուս կույսերի հետ միասին հեռանում են Հռոմից. «Այն ժամանակ նրանք եկան-հասան Հայոց երկիրը, Այրարատ գավառը, Վաղարշապատ քաղաքը, որը նաև Նորաքաղաք է կոչվում, Հայոց թագավորների նստավայրը: Այնուհետև եկան-մտան այգեստանների հնձանները, որոնք շինված էին հյուսիսարևելյան կողմում: Նրանք սնվում էին՝ իրենց ունեցվածքը քաղաքում վաճառելով, չունեին իրենց հետ ապրուստի միջոցներ, միայն թե նրանցից մեկը գիտեր ապակեգործության արհեստը, ապակյա ուլունքներ էր պատրաստում և իրենց օրական ապրուստի ու պարենի դրամն էին ճարում»[3]:

Այնուհետև Հռոմի Դիոկղետիանոս կայսրը սուրհանդակներ է ուղարկում Հունաց աշխարհի տարբեր կողմեր, նաև Մեծ Հայքի Տրդատ արքայի մոտ, որին տեղեկացնում է իր երկրից փախած կույսերի մասին, ովքեր, մերժելով աստվածներին, կարողացան իրենից հեռացնել անգամ նրանցից մեկին, որին ցանկացել է կնության առնել: Ըստ այդմ, կայսրը կարգադրում է Տրդատին. «Արդ, փութաջան եղի՛ր, եղբա՛յր մեր, որպեսզի ուր էլ լինեն այդ կողմերում, կարողանաս նրանց հետքը գտնել և նրա հետ եղածներին դայակով հանդերձ վրիժառությամբ մահվան արժանացնես, իսկ խաբված չքնաղագեղ կույսին այստեղ ինձ ուղարկես: Իսկ եթե նրա գեղեցկությունը քեզ հաճո թվա, այդտեղ մոտդ կպահես, քանզի նրա նմանը երբեք չգտնվեց մեր Հունաց աշխարհում»[4]:

[2] [144]:
[3] [150]:
[4] [156]:

Այս լսելով՝ Տրդատ արքան անմիջապես սուրհանդակներ է ուղարկում իր տերության տարբեր կողմեր, իսկ կույսերին գտնողներին խոստանում է պարգևներ: Շատ չանցած թագավորանիստ Վաղարշապատ քաղաքի հնձաններում պատսպարված կույսերի գտնվելու վայրը հայտնի է դառնում. «Երբ նրանց մասին իրողությունը հայտնի դարձավ, ապա երկու օր վահանափակ շրջապատեցին նրանց՝ հետևակ զորքի մի լեգեոնի հանձնարարելով պահել նրանց այնտեղ, ուր գտնվում էին: Ապա երկու օր անց Հռիփսիմեի պարկեշտության ու չքնաղ գեղեցկության համբավը հռչակվելով բազմամբոխ հրապարակներում տարածվեց, և ամեն մարդ մյուսին իր զարմանքն էր հայտնում»[5]:

Հռիփսիմեի գեղեցկության մասին լուրը հասցնում են նաև Տրդատին, որն էլ հրամայում է նրան արքունիք բերել. «Իսկույն արքունիքից շուտափույթ ոսկեպատ գահավորակներ հասցրին, սպասավորներով հանդերձ, հնձանի դուռը, քաղաքից դուրս, ուր նրանց կացարանն (վանքն) էր: Նաև ազնիվ, գեղեցիկ, փափուկ ու պայծառ հանդերձներ և երևելի զարդարանքներ մատուցեցին նրան արքունիքից, որպեսզի զարդարվի և շուքով ու պատվով քաղաք մտնի ու ներկայանա թագավորին, քանզի [սա] թեև չէր տեսել նրան, սակայն ըստ այն բոլորի, որ պատմել էին նրա վայելուչ գեղեցկության մասին, մտածեց կնության առնել»[6]:

Իմանալով թագավորի մտադրությունը՝ Գայանե մայրապետն անմիջապես հորդորում է իր սան Հռիփսիմեին տեղի չտալ և չուրանալ հավատն ու Քրիստոսին: Տիրոջ զորությանն ապավինելով՝ Հռիփսիմեն սկսում է բարձրաձայն աղոթել. «Տեր Աստված ամենակալ, որ ստեղծեցիր քո արարածներին սիրելի ու միածին Որդու ձեռքով և երևելի ու աներևույթ արարածների հորինվածքներ կազմեցիր սուրբ Հոգու միջոցով: Դո՛ւ ես, որ ոչնչից ամեն ինչին էություն տվեցիր և քո հրամանով են վարվում երևելի և

[5] [162]:
[6] [166]:

աներևույթ բոլոր զորությունները երկնքում ու երկրի վրա, ծովի մեջ ու ցամաքում...»[7]: Այսպես, Հռիփսիմեն և նրա ընկերուհիները ձեռքերը վեր աղերսում էին ամենակալ Տիրոջից փրկություն ու սպասվող պղծությունից ազատագրում: Աղոթքը շարունակվում էր նաև արքունի սպասավորների, նախարարների ու ավագանու մեծամեծների ներկայությամբ, որոնք եկել էին Հռիփսիմեին արքունիք տանելու նպատակով: Այդ պահին է, որ սաստիկ որոտում է երկինքը և լսվում է Տիրոջ խոսքը. «Զորացեք, պինդ կացեք, քաջալերվեցեք, քանզի ես ձեզ հետ եմ, պահեցի ձեզ ամեն ճանապարհներում, անարատ վիճակում ձեզ բերի հասցրի մինչև այս տեղերը, որպեսզի այստեղ ևս փառավորվի իմ անունը հյուսիսային կողմերի հեթանոսների առջև: Մանավանդ դու, Հռիփսիմե, արդարև, ըստ քո անվանը, մահվանից դեպի կյանք նետվեցիր (ընկեցեալ) Գայանեի ու քո սիրելիների հետ: Մի՛ վախենաք, այլ կգաք այն տեղը, որ ես ու իմ Հայրը պատրաստել ենք, ուրախության անքննելի տեղը՝ ձեզ և նրանց համար, որոնք մի անգամ ձեզ նման կլինեն»[8]:

Տեղի ունեցածի մասին արքունի սպասավորներն իրազեկում են Տրդատ թագավորին, իսկ վերջինս հրամայում է Հռիփսիմեին բռնի բերել ապարանք ու փակել սենյակում: Հետևելով արքայի կարգադրություններին՝ «սպասավորները բռնի տարան Սուրբ Հռիփսիմեին՝ մերթ բարձրացրած, մերթ քարշ տալով, իսկ նա աղաղակում էր և ասում. «Տեր Հիսուս Քրիստոս, օգնի՛ր ինձ»[9]:

Ապարանքում ևս Տրդատին չի հաջողվում տիրանալ գեղեցկուհի Հռիփսիմեին, քանզի վերջինս Սուրբ Հոգով զորացած քաջաբար մարտնչում էր: Սուրբ կույսից պարտված և միաժամանակ շփոթված Տրդատը հրամայում է իբրև միջնորդ բերել

[7] [169]:
[8] [175]:
[9] [178]:

Գայանեին, որը պիտի համոզեր սրբուհուն կատարել արքայի կամքը: Պարանը վզից գցած արքունիք հասցնելուց հետո Գայանեն ճիշտ հակառակն է անում՝ հորդորելով իր սանին հետևյալ բառերով. «Որդյա՛կ, թող Քրիստոսը քեզ պղծությունից պահի և զորավիգ լինի. քավ լիցի, որդյա՛կ, եթե Աստծո կենաց ժառանգությունից դուրս գաս ժառանգելու համար անցավոր աշխարհը, որը ոչինչ է, այսօր կա և վաղը կկորչի»[10]: Լսելով այս՝ թագավորը հրամայում է տված խորհուրդների համար տանջանքների ենթարկել Գայանեին, բայց ապարդյուն. նա անկոտրում շարունակում է միևնույն խրատները հղել Հռիփսիմեին:

Տիրոջից ու Սուրբ Գայանեի հորդորներից զորացած Հռիփսիմեն մարտնչում է թագավորի դեմ և ուժգին հարվածներով պարտության մատնում նրան, մասնավորապես. «մերկացրեց իր հանդերձներից՝ պատմուճանը պատառ-պատառ եղած, թագի նշանը իրենից ընկած, խլված, ամոթալի վիճակում թողեց»[11]: Այս ամենից հետո Հռիփսիմեն դուրս է գալիս ապարանքից ու Արեգ դռնով անցնում քաղաքի արևելյան կողմը. «Գնալով հնձանի մոտ, ուր առաջ իրենց կացարանն էր, ընկերներին ավետիս տվեց ու ինքն անցավ գնաց քաղաքից հեռու հյուսիսային կողմի արևելք ընկած մի վայր, մի ավազուտ սարավանդ բարձրավանդակ, մոտիկ բուն պողոտային, որը տանում էր Արտաշատ քաղաքը»[12]:

Այստեղ ևս Հռիփսիմեն ծնկի է գալիս ու աղոթք բարձրացնում առ Աստված. «Տեր ամենայնի, ո՞վ կարող է քեզ հատուցել մեզ շնորհած քո բարիքների դիմաց, քանզի դու հաստատուն պահեցիր քո նկատմամբ ունեցած մեր հույսը և ազատեցիր մեզ գազանի պիղծ ժանիքներից, որն ապականում էր մեզ...»[13]: Շարունակում էր աղոթել Հռիփսիմեն, երբ վրա են հասնում

[10] [183]:
[11] [191]:
[12] [192]:
[13] [193]:

թագավորի իշխանները, դահճապետն ու դահիճները: Ագաթանգեղոսի հաղորդմամբ՝ առաջին բանը, որ ուզել են անել՝ նրա լեզուն կտրելն էր, որն ինքը՝ Հռիփսիմեն է մեկնել իրենց, այնուհետ. «նրա վրայի պատառոտուն հանդերձները հանեցին ու գետնին չորս ցից խփելով՝ երկուսը ոտքերից, երկուսը ձեռքերից կապելով՝ պրկեցին նրան: Մոտեցրին կանթեղները և ժամերով այրեցին ու խորովեցին նրա մարմինը կանթեղների հրով: Նրա գոգը քարեր լցրին, աղիքները վայր թափեցին և մինչդեռ նա կենդանի էր, երանելու աչքերը փորեցին: Ապա մաս-մաս հոշոտեցին նրան՝ ասելով. «Ամեն ոք, որ կհամարձակվի արհամարհել ու անարգել թագավորների հրամանները, նրա նման կկորչի»»[14]:

Պատմագիրը վկայում է, որ բացի սրբից, այստեղ հավաքված էին նաև այլ այրեր ու կանայք, ավելի քան յոթանասուն մարդ, որոնցից մոտ երեսուներկու հոգու ևս սրի քաշելով կոտորեցին: Այնուհետև նահատակվեց նաև հնձանում մնացած հիվանդ կույսը (Մարիանեն), ապա՝ Գայանե մայրապետն ու իր երկու միանձնուհիները: Եվ այսպես. «Նահատակվեց Սուրբ Հռիփսիմեն սրբերի դասով մեկտեղ Հոռի ամսի քսանվեցին երեսուներեք նահատակակից ընկերներով: Իսկ Հոռի ամսի քսանյոթին Սուրբ Գայանեն իր երկու ընկերներով, որոնք նրա հետ մարտնչեցին, պսակներ ընդունեցին և առան հաղթության թագը»[15]:

* * *

Ս. Հռիփսիմեի վարք-վկայաբանության հիմնական «դրվագները» սրանք էին, որից հետո, ըստ պատմագրի, հեթանոս Տրդատն արժանանում է Տիրոջ պատժին, խոզի կերպարանք ստանում ու ապաշխարում: Նա նախ ազատում է Խոր Վիրապի

[14] [198]:
[15] [210]:

բանտում ավելի քան 13 տարի արգելափակված, բայց հրաշքով ողջ մնացած Գրիգոր Լուսավորչին, որն էլ համաձայն իր տեսլիքի՝ Վաղարշապատում հիմնում է քրիստոնեական առաջին վկայարանները. Միածնի իջման վայրում, որտեղ կառուցվեց Ս. Էջմիածին Մայր տաճարը, Ս. Հռիփսիմեի նահատակության վայրում, որտեղ այժմ Ս. Հռիփսիմե վանքն է, Ս. Գայանեի նահատակության վայրում, որտեղ Ս. Գայանե վանքն է և հիվանդ կույսի նահատակության վայրում, այն է՝ հնձանից քիչ հեռու, որտեղ Ս. Շողակաթ վանքն է:

Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ՎԱՆՔԻ ՊԱՏՄԱՎԻՄԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Վաղարշապատ քաղաքի հյուսիսարևելյան կողմում՝ ոչ բարձր բլրի վրա, վեր է խոյանում հայկական միջնադարյան ճարտարապետության գլուխգործոցներից մեկը՝ Ս. Հռիփսիմե տաճարը: Ագաթանգեղոսի հաղորդմամբ՝ Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքում բացի «ճախարակաձև խարսխից» կային նաև երեք այլ խարիսխներ. «...մեկը այն տեղում, ուր նահատակվեց Սուրբ Գայանեն երկու ընկերների հետ, մեկը այն տեղում, ուր Սուրբ Հռիփսիմեն նահատակվեց երեսուներկու ընկերների հետ և մեկը՝ հնձանի տեղում»[16]: Այսպես, Ս. Հռիփսիմե կույսի և նրա երեսուներկու ընկերուհիների նահատակման վայրում Ս. Գրիգոր Լուսավորչը հիմնում է քրիստոնեական առաջին վկայարաններից մեկը:

Պարսից Շապուհ Բ. արքայի և Մեհրուժան Արծրունու՝ 4-րդ դարավերջին Հայաստան կատարած ասպատակության ժամանակ Վաղարշապատի մյուս սրբավայրերի հետ ավերվում է նաև Ս. Հռիփսիմե կույսի վկայարանը: 395 թ. դրանք բարեկարգում ու վերաշինում է Ս. Սահակ Պարթև (387-439) կաթողիկոսը, ում կողմից կառուցված «անշուք ու մթին» վկայարան-մատուռներից մեկի տեղում կամ, որ առավել հավանական է, դրա հարևանությամբ, մոտ երեք դար հետո, Կոմիտաս Ա. Աղցեցի (615-628) կաթողիկոսը կառուցում է ներկայիս Ս. Հռիփսիմե տաճարը: Այս մասին պատմագիր Սեբեոսը հաղորդում է հետևյալը. «Խոսրով Ապրվեզի թագավորության քսանութերորդ տարում Կոմիտաս կաթողիկոսը Վաղարշապատ քաղաքում քանդեց

[16] **Ագաթանգեղոս**, էջ 417 [737]:

Սուրբ Հռիփսիմեի մատուռը, քանզի խիստ ցածր ու մթին էր այդ կառույցը, որ շինել էր Սուրբ Ներսեսի որդին՝ հայոց կաթողիկոս Սուրբ Սահակ հայրապետը»[17]: Սասանյան արքա Խոսրով Բ. Փարվեզը (Ապրուէզ, Ապրվեզ) գահակալել է 590-628 թթ.,[18] հետևաբար, նրա թագավորության քսանութերորդ տարին համընկնում է 618 թ., որն էլ համարվում է տաճարի կառուցման ստույգ թվականը:

1976-1978 թթ. Ս. Հռիփսիմե տաճարի շրջակայքում իրականացված հնագիտական-հետախուզական աշխատանքների ընթացքում (ղեկավար՝ ակադ. Բաբկեն Առաքելյան, հնագետ՝ Ռաֆիկ Թորոսյան), տաճարի արևելյան կողմում՝ մոտ 10 մ հեռավորության վրա, պատահաբար հայտնաբերվել են 4-5-րդ դդ. միախորան, թաղակապ եկեղեցու ավերակներ, սարկոֆագներ (նկ. 1), քառանիստ կոթողի բեկորներ, հնձաններ, հորեր, ջրատար խողովակներ և այլն[19]: Հետաքրքիրն այն է, որ

[17] **Սեբեոս**, Պատմություն, արևելահայերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները, **Գ. Խաչատրյանի և Վ. Եղիազարյանի,** Երևան, 2005, էջ 167 (այսուհետև՝ Սեբեոս):

[18] Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1984, էջ 262:

[19] **Ռ. Մ. Թորոսյան**, Հռիփսիմեի տաճարի շրջակայքի նորահայտ հուշարձանները, Հանրապետական չորրորդ գիտական կոնֆերանս, զեկուցումների թեզեր, Երևան, 1979, էջ 45: Documents of Armenian architecture. Vagharshapat, v. 23, Venezia, 1998, p. 142. **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, 2016, էջ 351-352:

Ս. Հռիփսիմե վանքում հնագիտական պեղումներ են իրականացվել դեռևս 1959 թ.՝ ճարտարապետ Ալ. Սահինյանի ղեկավարությամբ: Ուսումնասիրությունները պարզել են, որ 618 թ. կառուցված տաճարի գմբեթակիր որմնամույթերից երեքի տակ տեղադրված են հնագույն շենքի զարդաքանդակ (պարանահյուս, ուլունքաշար գոտիներով) քիվերի բեկորներ՝ նման Գառնիի հեթանոսական տաճարի քանդակային հորինվածքներին, որոնք, հավանաբար, պատկանել են հելլենիստական շրջանում ստեղծված մի կառույցի, որը գտնվելիս է եղել Ս. Հռիփսիմեի տաճարի տեղում կամ շրջակայքում: Պեղումների ժամանակ մոտ 40 սմ խորության վրա

շրջակայքում հայտնաբերվել են նաև քրիստոնեական գերեզմաններ՝ «աճյուններովը գլխատված մարմինների», ինչից կարելի է ենթադրել, որ հենց վանքի տարածքում են թաղվել Հռիփսիմեն և նրա երեսուներկու ընկերուհիները[20]: Ինչ վերաբերում է նորաբաց եկեղեցուն, ապա, ամենայն հավանականությամբ, սա վաղքրիստոնեական սահակաշեն այն կառույցն է, որն ըստ Սեբեոսի՝ քանդել է Կոմիտաս կաթողիկոսը կամ այդ ժամանակ այն արդեն իսկ ավերված է եղել, և նա տաճարը կառուցել է վերջինիս հարևանությամբ:

Եկեղեցու տեղի կառուցման հարցում ուսումնասիրողների տեսակետները հիմնված են մատենագրական վկայությունների վրա, համաձայն որոնց՝ Կոմիտասը տաճարը կառուցել է սահակաշեն մատուռի տեղում՝ այն քանդելուց հետո: Վիմագրագետ Ալ. Մանուչարյանի համոզմամբ՝ «տաճարի տեղում 4-րդ դարում կառուցված է եղել աշտարակաձև մի մատուռ, ակներևաբար կատակոմբային տիպի դամբարանի վրա, որովհետև Ագաթանգեղոսն այն բնութագրում է «կարճ, ցածր» բառերով», սակայն «թե ինչ վիճակում է հասել այն մինչև 7-րդ դարի սկիզբը, ներկայումս հնարավոր չէ պարզել»[21]: Կարծում ենք՝ եկեղեցու շրջակայքի հնագիտական ուսումնասիրությունն ու ի հայտ եկած բազիլիկ եկեղեցու ավերակներն էական նշանակություն ունեն տաճարի կառուցման տեղի հստակեցման հարցում, և ըստ այդմ, հավանական պետք է համարել, որ Կոմիտաս կաթողիկոսը տաճարը կառուցել է

բացվել են տաճարի սկզբնական հատակը, ինչպես նաև Ս. Հռիփսիմե կույսի դամբարանի նախկին մուտքի քարե աստիճանը ([Հաղորդագրություն] Ս. Էջմիածնի Մայր տաճարի և Ս. Հռիփսիմեի տաճարի պեղումների մասին, «Էջմիածին», 1959, Է., էջ 21, տես նաև Հայկական ճարտարապետության պատմություն (այսուհետև՝ ՀՃՊ), հ. առաջին, Երևան, 1996, էջ 231):

[20] [Հաղորդագրություն], «Էջմիածին», 1979, Ե., էջ 4:

[21] **Ալ. Մանուչարյան**, Քննություն Հայաստանի IV-ԻX դարերի շինարարական վկայագրերի, Երևան, 1977, էջ 77-78:

բազիլիկ եկեղեցուն կից և անմիջապես դամբարանի վրա: Այստեղից հետևություն, որ Սեբեոսի հիշատակած «ցածր ու մթին» կառույցը սրբի ստորգետնյա դամբարանն է, որը, թերևս, ձևափոխել ու տաճարի ավագ խորանը նրա վրա է հիմնել 7-րդ դարի ճարտարապետը: Նկատենք, որ նորաբաց եկեղեցու հարևանությամբ 1997 թ. ճարտարապետ Հրաչյա Գասպարյանի նախագծով և Լուիզ Մանուկյանի մեկենասությամբ կառուցվել է Ս. Հռիփսիմյանց կույսերին նվիրված բաց խորանատիպ հուշարձան, որի տակ ամփոփվել են սուրբ կույսերի նշխարներից (նկ. 2):

Սեբեոսի հաղորդմամբ՝ տաճարի կառուցման աշխատանքների ընթացքում գտնվել են Սուրբ կույսի նշխարները, որոնք Կոմիտասն ամփոփել է իր տեղում. «Կառուցեց եկեղեցին և պատերի գիջության պատճառով երանելիի «տապանակը» մինչև կրի ցամաքելը թողեց բացօթյա: Ապա ամփոփվեց իր հանգստարանում»[22]: Այդ է վկայում նաև Հովհաննես Դրասխանակերտցին, ըստ որի. «...Կոմիտաս մեծ հայրապետը սքանչելի, վայելուչ, պանծալի ու լուսավոր շինություններով բարեկարգում էր սուրբ Հռիփսիմյանների վկայարանը, որը սկզբում կառուցված էր փոքր ու անկանոն տեսքով: Այնտեղ էլ հանդիպելով սուրբ տիկին Հռիփսիմեի [մասունքին]՝ այն պակաս հոգևոր մխիթարություն չէր ամբողջ հայաստանցիների համար: Մասունքը կնքված էր Սուրբ Գրիգորի և Սուրբ Սահակի մատանիներով: Կոմիտաս մեծ հայրապետը, չհամարձակվելով բացել այն, նրա վրա դրեց նաև իր կնիքը»[23]:

Դամբարանի մուտքը նախկինում ավագ խորանի բեմառէջքի միջնամասից է եղել, որն այժմ փակ է, և դամբարան կարելի է մտնել տաճարի հյուսիսարևելյան ավանդասենյակից՝

[22] **Սեբեոս**, էջ 167:

[23] **Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,** Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները **Գ. Թոսունյանի,** Երևան, 1996, էջ 77-79:

հետագայում փորված անցումի միջով: Ներսում տեղադրված է Ս. Հռիփսիմե կույսի դագաղաձև տապանաքարը, վրան պատկերված է Սուրբ կույսը՝ խաչը ձեռքին, իսկ ստորին մասում հետևյալ մակագրությունն է. «Նորոգեցաւ ի հայրապետութան Տ. Տ. Վազգէն Ա. կաթողիկոսի, 1986 թիւ» (նկ. 3):

Ստորգետնյա դամբարանը, որն իրենից ներկայացնում է ուղղանկյուն հատակագծով, արևելյան կողմում աբսիդով և պայտաձև թաղով մի շինություն, ճարտարապետներ Ա. Երեմյանը[24] և Ս. Մնացականյանը վերագրում են Սահակ կաթողիկոսին, այսինքն՝ թվագրում են 5-րդ դարի սկզբով: Ըստ Ս. Մնացականյանի՝ դամբարանի վերնամասը քանդելուց հետո պահպանված ստորգետնյա շինության վրա Կոմիտաս կաթողիկոսը 618 թ. կառուցել է ներկայիս հոյակերտ տաճարը: Իբրև ապացույց նա վկայակոչում է Օձունի կոթողի հայտնի պատկերաքանդակները, ուր բուսական և երկրաչափական նրբագեղ զարդամոտիվներից ու քրիստոնեական պատկերաքանդակներից բացի կան նաև Հայաստանում քրիստոնեության ընդունման ու տարածման հետ առնչվող հանգուցային դրվագներ, այդ թվում՝ խոզակերպ Տրդատը, Ս. Գրիգոր Լուսավորիչը, Ս. Հռիփսիմեի դամբարանը (նկ. 4), Տրդատն իր քրոջ՝ Խոսրովդուխտի հետ և այլն[25]: Այսինքն, ըստ ճարտարապետի, Կոմիտասը նախաձեռնել է մեծ եկեղեցին կառուցել անմիջապես դամբարանի վրա՝ քանդելով նրա վերնամասը:

Ըստ ճարտարապետական հորինվածքի՝ Ս. Հռիփսիմե տաճարն արտաքուստ ուղղանկյուն, քառախորան հատակագծով շինություն է: Ունի երկու մուտք՝ բացված արևմտյան և հարավային խաչաթևերում, իսկ ներսի չորս անկյուններում ավանդատներն են՝ քառակուսի եզրաձևերի մեջ: Ս. Հռիփսիմեի տիպի հուշարձաններում է, որ առաջին անգամ ի հայտ են

[24] **А. Б. Еремян,** Храм Рипсимэ, Ереван, 1955, с. 68.
[25] ՀՃՊ, հ. երրորդ, Երևան, 2004, էջ 184-186, 193-195:

գալիս սենյակներ կենտրոնագմբեթ հորինվածքի արևմտյան կողմում, որ մինչ այդ հայտնի չէր գմբեթավոր համակարգում[26]: Տաճարն ինքնատիպ է նաև պատերի արտաքին զույգ խորշերով, որոնք լույսի և ստվերի համակցությամբ ստեղծում են վերևում աղեղնաձև յուրօրինակ եռանկյունիներ:

Ինքնատիպ են նաև տաճարի պատուհանների կամարաձև պսակները՝ ոճավորված բուսական ու երկրաչափական զարդամոտիվներով, որոնք 7-րդ դարի ճարտարապետությանը բնորոշ նմուշներ են (նկ. 5ա-գ), ինչպես նաև ժամանակագրորեն վաղագույն վիմագրերը:

Ա. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեծագույն բարեբախտությամբ պահպանվել են տաճարի կառուցման գրեթե նույնաբովանդակ զույգ վիմագրերը՝ Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսի անվան հիշատակմամբ: Դրանցից առաջինը տաճարի արևմտյան պատի կետրոնական մասում է (նկ. 6): Քառատող արձանագրության համաձայն՝ Ս. Հռիփսիմեի եկեղեցապան, այսինքն՝ վանահայր, առաջնորդ Կոմիտասը կառուցել է տաճարն ի պատիվ Քրիստոսի սուրբ վկաների, որոնք տվյալ դեպքում Ս. Հռիփսիմեն ու նրա ընկերուհիներն են[27]: Չնայած նրան, որ վիմագրում

[26] Նույն տեղում, էջ 95, 121, նաև **Վ. Մ. Հարությունյան**, Էջմիածնի ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1969, էջ 22-23:
[27] Հրատ. **Յովհաննէս եպս. Շահխաթունեանց**, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրությամբ **Ա. Տեր-Ստեփանյանի,** Ս. Էջմիածին, 2014, էջ 186 (այսուհետև՝ Շահխաթունեանց): **Հ. Ղևոնդ Ալիշան,** Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 238 (այսուհետև՝ Ալիշան): **Գ. Հովսեփյան**, Կոմիտաս կաթուղիկոսի մի նոր արձանագրություն, «Արարատ», 1898, Ժ., էջ 442: Նույնի Քարտէզ հայ հնագրութեան, «Շողակաթ Ս. Էջմիածնի» հայագիտական ժողովածու, գիրք Ա., Վաղարշապատ, 1913, էջ 172: **Մեսրոպ վարդապետ [Տեր-Մովսիսյան]**, Էջմիածին և հայոց հնագույն եկեղեցիներ, պրակ Ա., Ս. Էջմիածին, 1904, էջ 96: **Ս. Ծոցիկյան**, Արարատ-Կովկաս, հ. Ա.,

ստույգ թվական նշված չէ (ինչպես նույն դարաշրջանի այլ վիմագրերում), այդուհանդերձ Կոմիտաս կաթողիկոսի անվան հիշատակությունն ու Սեբեոս պատմագրի վերոնշյալ հաղորդումն ինքնին բավական են տաճարի կառուցումը 7-րդ դարասկզբով թվագրելու, ավելին՝ 618 թ. կառուցված համարելու:

17-րդ դ. Փիլիպոս Աղբակեցի (1633-1655) կաթողիկոսի օրոք եկեղեցու արևմտյան մուտքին կից կառուցված նախամուտքը, ապա դրա վրա Ղուկաս Կարնեցի (1780-1799) կաթողիկոսի օրոք կառուցված զանգակատունը քողարկում են հիշյալ արձանագրությունը, ինչպես նաև արևմտյան դռան վերնամասում առկա պատուհանի կամարի քանդակազարդերը[28]: Հավանաբար, Մեսրոպ վարդապետը հենց այս հանգամանքը նկատի ունենալով է նշել, որ Ղուկաս կաթողիկոսի՝ 1790 թ. տաճարի արևմտյան մուտքի դիմաց կառուցած զանգակատունը միմիայն եկեղեցու տգեղությանն է ծառայում[29]: Իսկապես, արձանագրությունը տեսանելի չէ, տեղն՝ անորոշ: Այդ է պատճառը, որ ակադ. Հովսեփ Օրբելին, երբ եղել է Ս. Հռիփսիմե վանքում, չգտնելով արձանագրությունը նշել է, որ նախորդ հրատարակիչները,

Ֆրեզնո, 1917, էջ 133: **Ա. Ե. Ե. Ե. Ե.** Храм Рипсимэ, с. 27. **Վահան վրդ. Տերյան**, Պատմական համառոտ ակնարկ Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի և Ս. Շողակաթի վանքերի և այդ վանքերում գտնվող կաթողիկոսական տապանագրությունների մասին, «Էջմիածին», 1961, Բ., էջ 32: **И. А. Орбели**, Избранные труды, Ереван, 1963, с. 407. **Ա. Գ. Աբրահամյան,** Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973, էջ 83: **Վ. Յարութիւնեան**, Եկայք շինեսցուք, Ս. Էջմիածին, [1988], էջ 60: ՀՃՊ, հ. երրորդ, Երևան, 2004, էջ 94: **А. Казарян,** Церковная архитектура стран Закавказья VII века. Формирование и развитие традиции, том I, М., 2012, с. 290. **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 249, արձ. 502:

[28] **Գ. Հովսեփյան**, Կոմիտաս կաթուղիկոսի մի նոր արձանագրութիւն, էջ 441-442:

[29] **Մեսրոպ վարդապետ,** Էջմիածին և հայոց հնագույն եկեղեցիներ, էջ 96:

ցավոք, չեն հստակեցնում, թե ստույգ որտեղ է գտնվում այդ արձանագրությունը, որը ես նույնպես չկարողացա տեսնել[30]:

Ս. Հռիփսիմե վանքին նվիրված մենագրության մեջ ճարտարապետ Ա. Երեմյանը նշում է, որ վիմագրում Կոմիտասի՝ եկեղեցապան կոչվելու հանգամանքը կարելի է բացատրել նրանով, որ մինչ կաթողիկոս օծվելը վերջինս եղել է Ս. Հռիփսիմե եկեղեցու վանահայրը կամ եկեղեցապանը, սակայն այստեղ խոսքը Ս. Սահակի կառուցած վկայարանի մասին է, որն, ըստ էության, կատարել է եկեղեցու դեր մինչ տաճարի կառուցումը[31]: Ըստ Սեբեոսի՝ Աբրահամ Ա. Աղբաթանեցուց (607-615) հետո. «...հայրապետական աթոռին նստեց Տարոնի եպիսկոպոս Կոմիտասը, որը Աղցք գյուղից էր, և սրա օրոք ավարտվեց Սուրբ Գրիգոր եկեղեցու կառուցումը»[32]: Ա. Երեմյանն իրավամբ նկատում է, որ դժվար թե Տարոնի եպիսկոպոսը միևնույն ժամանակ լիներ նաև Ս. Հռիփսիմեի վանահայրը, ուստի հնարավոր է, որ Կոմիտասը վանահայր է եղել այստեղ մինչ Տարոնում եպիսկոպոս լինելը, ինչի մասին Սեբեոսը կարող էր և չհիշատակել[33]: Բացի այդ՝ «Գիրք թղթոց»-ում պահպանված 608 թվակիր նամակում մի քանի եպիսկոպոսների, երեցների անուններ են հիշատակվում, այդ թվում՝ «երէց Սամուէլ Սրբոյ Հռիփսիմէի»[34], որը վկայում է մինչ տաճարի կառուցումը տեղում եկեղեցու գոյության փաստը: Ասվածի օգտին է նաև Մխիթար Այրիվանեցու վկայությունը, ըստ որի՝ Տեր Կոմիտասը ընդարձակեց Ս. Հռիփսեմեի վկայարանը[35]:

Իր հոդվածներից մեկում Ա. Երեմյանը հարց է բարձրացնում այն մասին, թե արդյոք հենց նույն Կոմիտասը չէ այս հանճարեղ

[30] **И. А. Орбели,** Избранные труды, с. 406.

[31] **А. Б. Еремян**, Храм Рипсимэ, с. 26.

[32] **Սեբեոս**, էջ 147:

[33] **А. Б. Еремян**, Храм Рипсимэ, с. 27.

[34] Գիրք թղթոց, երկրորդ հրատարակչութիւն, Երուսաղէմ, 1994, էջ 299:

[35] **Մխիթարայ Այրիվանեցւոյ** Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց **Մկրտիչ Էմին,** Մոսկվա, 1860, էջ 50:

կերտվածքի հեղինակը կամ ճարտարապետը, քանզի հայտնի է, որ վերջինս եղել է բազմաշնորհ անձավորություն՝ երգահան, երաժիշտ, արվեստաբան, ում գրչին են պատկանում նաև դավանաբանական բնույթի մի շարք աշխատություններ: Այս ամենը հաշվի առնելով՝ չի բացառվում, որ Կոմիտասը կարող էր ունենալ նաև ճարտարապետական կարողություն[36]:

Կոմիտաս կաթողիկոսի՝ տաճարի կառուցմանը վերաբերող երկրորդ արձանագրությունը, ի տարբերություն նախորդի, տեսանելի է, գտնվում է տաճարի ներսում՝ գմբեթարդի կենտրոնում (նկ. 7): Այն ծեփից բացվել է Մկրտիչ Ա. Վանեցի Խրիմյան Հայրիկի (1892-1907) օրոք՝ 1898 թ. նորոգման աշխատանքների ընթացքում: Տառաձևերի հնագրական ոճը նկատառելով՝ այն ևս պետք է դասել 7-րդ դարի վայելչագիր երկաթագրերի շարքը: Եռատող վիմագիրը, որը համառոտ հիշատակագրություն է, դարձյալ հայտնում է արդեն կաթողիկոս Կոմիտաս Աղցեցու անունը, որը տաճարի կառուցողն է[37]: Արձանագրությունը հիմնականում անեղծ է, որոշ տեղեր միայն ծեփը մաքրելիս վարպետների անզգուշության պատճառով փոքր-ինչ վնասվել է:

Արձանագրությունը կրող քարն ըստ Ա. Երեմյանի՝ իր կորությամբ առավել համընկնում է հարավային և հյուսիսային խորանների շառավիղներին: Բացի այդ՝ արևելյան խորանի կենտրոնական մասում նման վիմագրի առկայությունն անսովոր է, ուստի հավանական է, որ քարն սկզբնապես տեղադրված է եղել հյուսիսային խորանում՝ հակառակ հարավային մուտքին, որտեղից մտնողին այն տեսանելի կլիներ: Ըստ էության, երբ

[36] **Ա. Երեմյան**, Հռիփսիմե, «Գիտություն և տեխնիկա», 1967, Հմր 1 (41), էջ 15-16:

[37] Հրատ. **Գ. Հովսեփյան**, Կոմիտաս կաթուղիկոսի մի նոր արձանագրութիւն, էջ 441: **Մեսրոպ վարդապետ**, Էջմիածին և հայոց հնագույն եկեղեցիներ, էջ 96: **Ա. Б. Еремян**, Храм Рипсимэ, с. 28. **И. А. Орбели**, Избранные труды, с. 408. ՀՃՊ, հ. երրորդ, էջ 94: **А. Казарян,** Церковная архитектура стран Закавказья VII века, том I, с. 290. **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 251, արձ. 503:

քանդված է եղել տաճարի հյուսիսային խորանը, քարը տեղափոխվել է այժմյան տեղը[38]:

Ալ. Մանուչարյանի համոզմամբ՝ արձանագրությունն ունի ոչ թե շինարարական, այլ հայցելու բովանդակություն և, ըստ երևույթին, փորագրվել է Կոմիտասի մահվան՝ 628 թվականին[39]:

Բացի այն, որ նշված արձանագրությունները համարվում են Ս. Հռիփսիմե վանքի հնագույն քարեղեն վկայագրերը, դրանք նաև մեր վաղագույն վիմագրերն են՝ Տեկորի տաճարի արևմտյան մուտքի բարավորի արձանագրությունից հետո[40]: Վիմագրերի հնագրական տեսակը, որն ըստ Գ. Հովսեփյանի՝ «խոշոր, բոլորաձև և գեղեցիկ երկաթագիր է»[41], մեկ անգամ ևս փաստում է տաճարի՝ 7-րդ դարի կառույց լինելու հանգամանքը:

Բացի հիշյալ արձանագրություններից՝ Ա. Երեմյանը կարծում է, որ եղել են ևս երկուսը՝ արևմտյան պատի արտաքուստ աջ և ձախ կողմում ագուցված «ծիծեռնակապոչ» բռնակներով հուշատախտակներին (նկ. 8): Ըստ Ա. Երեմյանի՝ թեև քարերին առկա գրերն ամբողջովին եղծված են, սակայն նշմարվում են հայերեն տառերին բնորոշ մասնիկներ, որոնք թույլ են տալիս կարծել, թե վիմագրերը եղել են հայատառ[42]: Մեր ուսումնասիրությամբ պարզեցինք, որ տաճարի մուտքից դեպի աջ

[38] **А. Б. Еремян**, Храм Рипсимэ, с. 27-28.

[39] **Ալ. Մանուչարյան**, նշվ. աշխ., էջ 79:

[40] **Կ. Ղաֆադարյան**, Էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության, գիտական ժառանգություն, հ. 5, Երևան, 2007, էջ 107-111:

[41] **Գարեգին վարդապետ [Յովսեփեան]**, Քարտէզ հայ հնագրութեան, էջ 172:

[42] **А. Б. Еремян**, Храм Рипсимэ, с. 28: Կ. Ղաֆադարյանը հիշյալ երկու արձանագրությունները ևս վերագրում է Կոմիտաս կաթողիկոսին՝ նշելով, որ դրանք գտնվում են տաճարի «արևմտյան պատի հյուսիսային և հարավային ծայրերին (դրսից), խիստ մաշված են և միայն հատուկենտ տառեր են կարդացվում»: Տես Խորհրդային Հայաստանի պատմական հուշարձանները, կազմեց **Կ. Ղաֆադարյան,** Վաղարշապատի շրջան, Յերեվան, 1938, էջ 12-13:

ագուցված ուղղանկյունաձև քարին իսկապես հայերեն գրեր են նշմարվում, ինչպես օրինակ՝ Ա, Ղ, Յ և այլն:

Մինչև 17-րդ դ. պատմիչներից և ոչ ոք որևէ տեղեկություն չի հաղորդում վանքում կատարված շինարարական աշխատանքների մասին: Առաքել Դավրիժեցին նկարագրում է 17-րդ դ. տաճարի անմխիթար վիճակը և նույն դարում Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսի ծավալած շինարարական աշխատանքները. «...եկեղեցու արտաքին կողմից գմբեթի գլուխը, ամբողջ տանիքը, պատերի երեսները և նրանց հատակները, իսկ ներսի կողմից բեմը, հատակի սալարկը, չորս խորանների մեջը՝ բոլոր հիշածներս ավերված ու քայքայված էին, դրա համար մեծ ջանքով և երկար աշխատանքով ճիգ թափելով ամբողջը նորոգեցին, վերջացրին և եկեղեցու գագաթին [գմբեթին] շինեցին տերունական խաչի նշանը՝ [խաչը]»[43]:

Դավրիժեցին հաղորդում է, որ հիշյալ աշխատանքների ժամանակ երեք տեղից գտնվել են Ս. Հռիփսիմե կույսի նշխարները. երկուսը՝ քարերի մեջ, մեկը՝ փայտե արկղում՝ դրված մատռանման փոքր կառույցում, որի որմերին ևս գրեր են եղել, որոնք պատմիչը գրի է առել[44]:

Վերոնշյալ նորոգման ժամանակ են վերակառուցվել տաճարի բոլոր ճակտոնները, գմբեթի ծածկը, քանդվել ու հեռացվել են շքամուտքերը, կառուցվել է արևմտյան մուտքին կից նախասրահը, հետագայում՝ զանգակատունը և այլն: Չխորանալով ճարտարապետական մանրամասների մեջ՝ հավելենք, որ հետագա տարիներին ևս կատարվել են մասնակի

[43] **Առաքել Դավրիժեցի**, Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ **Վարագ Առաքելյանի,** Երևան, 1988, էջ 258-259 (այսուհետև՝ Առաքել Դավրիժեցի):

[44] Դավրիժեցու ընդօրինակած և այսօր չպահպանված բնագրերի վերծանությունը տես **Առաքել Դավրիժեցի,** էջ 259-260: **Ալիշան**, էջ 238: **Վահան վրդ. Տերյան**, Պատմական համառոտ ակնարկ..., «Էջմիածին», 1961, Բ., էջ 34-35: **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 252, արձ. 504-510:

նորոգումներ, որոնցից է գմբեթն ավարտող թմբուկի նիստերին համապատասխանող վրանաձև սալածածկ վեղարը: Խաչաթևերի և անկյունային սենյակների լանջավոր ծածկերը, այնպես էլ գմբեթի սֆերան հնում եղել են կղմինդրածածկ[45]:

Փիլիպոս կաթողիկոսի օրոք ինչպես Ս. Հռիփսիմե, այնպես էլ Ս. Գայանե վանքերում իրականացված նորոգչական աշխատանքների մասին է վկայում տաճարի արևմտյան պատի կենտրոնական մասում ագուցված խաչքարի եռատող վիմագիրը: 1653 թվակիր արձանագրությունը փորագրվել է Փիլիպոս կաթողիկոսի անունից, ըստ որի՝ նա վերստին նորոգել է Ս. Հռիփսիմե և Ս. Գայանե կույսերի անվանակիր եկեղեցիները[46]:

Նորոգման աշխատանքներին ժամանակակից է ծագումով Ս. Հռիփսիմե վանքից Հայաստանի պատմության թանգարանում պահվող եկեղեցական վարագույրը, որի կենտրոնում Ս. Հռիփսիմեն է, իսկ կողքերին՝ նրա երեսուներկու ընկերուհիները: Վարագույրն արձանագիր է. «Սուրբ կոյսն Հռիփսիմէ ԼԷ. (37) ընկերօքն: Յիշատակ է գոգնոցս խոճայ Աւետիքին եւ իւր ծնողաց հոգոյն, ի դուռն Ս. Հռիփսիմեանց ի կուսին, թվին ՌՃԲ. (1653), մայիսի Դ. (4)»[47]:

Եղիազար Այնթապցի (1681-1691) կաթողիկոսը ևս Ս. Հռիփսիմե վանքում շինարարական աշխատանքներ է նախաձեռնել ու միաբանություն հաստատել, որի մասին Զաքարիա

[45] ՀՃՊ, հ. երրորդ, էջ 98-100:

[46] Հրատ. **Շահխաթունեանց**, էջ 186: **Ալիշան**, էջ 240: **Վահան վրդ. Տերյան**, Պատմական համառոտ ակնարկ..., «Էջմիածին», 1961, Բ., էջ 34: **Վ. Յարութիւնեան**, Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները, Ս. Էջմիածին, 1996, էջ 15: Նույնի Եկայք շինեսցուք, էջ 59: **А. Казарян,** Церковная архитектура стран Закавказья VII века, том I, с. 293. **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 253, արձ. 511:

[47] Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների, պրակ 1. Հայերեն արձանագրությամբ առարկաներ, աշխ. **Ե. Մուշեղյանի**, Երևան, 1964, էջ 92, արձ. 105:

Սարկավագ Քանաքեռցին հաղորդում է. «Սա շենքեր կառուցեց Սուրբ Հռիփսիմեում՝ գեղեցկաշեն տներ, բաց պատշգամբներ ու հովանոցներ, հաստատեց միաբաններ»[48]:

Շինարարական աշխատանքները շարունակվել են նաև Նահապետ Ա. Եդեսացի (1691-1705) կաթողիկոսի օրոք: ՄՄ 1534 Հայսմավուրքի գրչության 1695 թվակիր ծավալուն հիշատակարանում գրիչ Գրիգոր Երևանցին նշում է ոչ միայն բազմաթիվ շինարարությունների թվում նաև Ս. Հռիփսիմե վանքի նորոգումների ու միաբանության հաստատման, այլև Վաղարշապատի վանքերի՝ Ս. Էջմիածնի, Ս. Հռիփսիմեի և Ս. Գայանեի հովանու ներքո ձեռագրի ընդօրինակումն ավարտելու մասին: Սա վկայում է, որ վանքում զարգացած էր նաև գրչարվեստը[49]:

Այնուհետ, Ս. Հռիփսիմե վանքն իբրև մարդաշատ ու գործող վանք է հիշատակվում Սիմեոն Երևանցի (1763-1780) կաթողիկոսի օրոք: Այս ընթացքում է կառուցվել վանքի հյուսիսարևմտյան հին պարիսպը՝ բուրգերով և հյուսիսային կողմի քարաշեն կամարավոր մուտքով հանդերձ (նկ. 9): Շինարարությունն, ըստ նույն դարպասի պատին պահպանված արձանագրության, իրականացվել է Սիմեոն Երևանցի կաթողիկոսի սպասավոր, Ս. Էջմիածնի միաբան Մկրտիչ եպիսկոպոսի միջոցներով՝ 1776 թ.[50]: Ընդ որում, վերջինս վախճանվել է 1789 թ. և թաղվել Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում[51]:

---

[48] **Զաքարիա Քանաքեռցի**, Պատմագրություն, թարգմանությունը և ծանոթագրությունները **Վարագ Առաքելյանի,** Երևան, 2013, էջ 171:

[49] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե., կազմեց՝ **Օ. Եգանեան**, Երևան, 2009, սիւն 392-394:

[50] Հրատ. **Շահխաթունեանց**, էջ 187: **Ալիշան**, էջ 241: **Վահան վրդ. Տերյան**, Պատմական համառոտ ակնարկ..., «Էջմիածին», 1961, Բ., էջ 35-36: **Վ. Յարութիւնեան**, Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները, էջ 71: **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 253, արձ. 512:

[51] **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 195, արձ. 371:

Հովհ. Շահխաթունյանցի հաղորդմամբ՝ տաճարի գմբեթի խաչը ևս կանգնեցվել է Սիմեոն Երևանցի կաթողիկոսի օրոք, ըստ հիշատակագրության՝ 1765 թ. «Ձեռամբ Սիմէօն կաթուղիկոսին, Սուրբ Հռիփսիմէի գագաթն է. ՌՄԺԴ. (1765)»[52]:

Դառնալով Սիմեոն Երևանցու հաջորդ Ղուկաս Կարնեցուն՝ պետք է նշել, որ նրա օրոք է կառուցվել տաճարի արևմտյան մուտքին կից գտնվող քառամույթ նախասրահի վերնահարկի զանգակատունը (ռոտոնդան), որի շինարարության մասին վկայող վիմագիրը զետեղվել է նույն նախասրահի հյուսիսարևելյան մույթի հարավային նիստին: Ըստ ընդարձակ արձանագրության՝ զանգակատունը կառուցվել է փրկչական 1790 թ.՝ Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի օրոք, հնդկահայ մեծահարուստ, կալկաթաբնակ Խաչիկ աղա Ջնթլումյանի հովանավորությամբ[53]: Մատենադարանի արխիվային բաժնի կաթողիկոսական դիվանում պահպանվել են զանգակատան շինարարության ծախսերի վերաբերյալ հաշվեթղթերը[54]:

Վանքի ներկայիս հարավարևելյան պարիսպը, ինչպես նաև վանատունը կառուցվել են ավելի ուշ՝ 1894 թ., վանահայր Երեմիա եպիսկոպոս Վաղարշապատցու օժանդակությամբ և Նախիջևանի բարեպաշտ ժողովրդի միջոցներով: Այդ է վկայում պարսպի հարավային մուտքի եռանկյունաձև ճակտոնի արձանագրությունը[55] (նկ. 10): Նշենք, որ պարիսպն անմիջապես կառուցվել է վերոհիշյալ 4-5-րդ դդ. բազիլիկ եկեղեցու վրա՝ բաժանելով այն երկու մասի:

---

[52] **Շահխաթունեանց**, էջ 52:

[53] Հրատ. **Շահխաթունեանց**, էջ 186: **Ալիշան**, էջ 240-241: **Ս. Ծոցիկյան**, Արարատ-Կովկաս, հ. Ա., էջ 134: **Վահան վրդ. Տերյան**, Պատմական համառոտ ակնարկ..., «Էջմիածին», 1961, Բ., էջ 35: **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 254, արձ. 513:

[54] ՄՄ ԿԴ արխիվ, թղթ. 6, վավ. 19:

[55] Հրատ. **Վահան վրդ. Տերյան**, Պատմական համառոտ ակնարկ..., «Էջմիածին», 1961, Բ., էջ 36: **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 254-255, արձ. 514:

Մեկ տարի անց՝ 1895 թ., միևնույն Երեմիա Վաղարշապատցու ջանքերով, պարսպապատի հարավարևելյան անկյունում կառուցվել է երկհարկանի վանատունը: Շինարարական արձանագրությունն ընդգրկող ուղղանկյունաձև քարն ագուցված է վանատան հարավային պատի վերնամասում[56]:

Ս. Հռիփսիմե տաճարի ավագ խորանի ձախ ավանդասենյակում առկա են բազմաթիվ արձանագիր քարեր. դրանց մեծ մասը բերվել է 1950-ական թթ. Մայր տաճարի նորոգման, ինչպես նաև հարակից վանքերի բարեկարգման աշխատանքների ժամանակ: Նրանցից առավել ուշագրավը Սիմեոն Երևանցու օրոք՝ 1766 թ., Մայր տաճարի շրջակա պարսպի կառուցման արձանագրությունն է[57]:

Միևնույն ավանդասենյակում է դրված նաև 1839 թվականը կրող արձանագիր երեք ուղղանկյունաձև սալաքար: Ըստ վիմագրերի՝ դրանք Հովհաննես Կարբեցի կաթողիկոսի (1831-1842) օրոք Ղազարապատի վերնահարկի արևմտյան երեք սենյակների կառուցման կամ նորոգմանն են վերաբերում, որոնց ծախսերը հոգացել են Եգիպտոսի փոխարքայի պաշտոնյաներ Պողոս և Պետրոս Յուսուֆյան (վիմագրերում՝ Յովսեփեան) Զմյուռնացիները և նրանց աշխատակից «մեծաշուք աղա» Ստեփան Սահակյան-Խալֆայանց Կեսարացին[58]: Քարերից յուրաքանչյուրն սկզբնապես ագուցված է եղել սենյակների արևելյան որմերին:

---

[56] Հրատ. **Վահան վրդ. Տերյան**, Պատմական համառոտ ակնարկ..., «Էջմիածին», 1961, Բ., էջ 36: **Վ. Յարութիւնեան**, Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները, էջ 115: **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 255, արձ. 515:

[57] Հրատ. **Շահխաթունեանց**, էջ 69: **Ալիշան**, էջ 212: **Վ. Յարութիւնեան**, Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները, էջ 65: **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 255, արձ. 516:

[58] Հրատ. **Շահխաթունեանց,** էջ 77: **Ալիշան,** էջ 229-230: **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 255-257, արձ. 517-519:

Բ. ՆՎԻՐԱՏՎԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բացի շինարարական արձանագրություններից Ս. Հռիփսիմե տաճարի որմերին պահպանվել են նաև նվիրագրեր: Դրանցից ուշագրավ է հատկապես արևմտյան մուտքի բարավորի դժվարընթեռնելի արձանագրությունը[59] (նկ. 11), որն ի հայտ է եկել 1958 թ.՝ Վազգեն կաթողիկոսի օրոք իրականացված պատերի ծեփի հեռացման աշխատանքների ժամանակ:

Ս. Հռիփսիմե տաճարի վերջին հիմնական նորոգումները սկսվել են 1955 թ., այսինքն՝ Վազգեն հայրապետի գահակալման առաջին իսկ տարվանից: Նպատակ ունենալով վերականգնել տաճարի հնամենի տեսքը՝ Վեհափառ Հայրապետի անմիջական համաձայնությամբ որոշվել է նախ և առաջ հեռացնել ԺԹ. դարավերջին արված եկեղեցու ներսի որմերի ծեփը, որը միայն խաթարում էր տաճարի հնամյա տեսքը: 1958 թ. մայիսին ճարտարապետ Հրանտ Հակոբյանի ղեկավարությամբ սկսվել են մաքրման աշխատանքները[60]: Ակադ. Վարազդատ Հարությունյանը գրում է, թե բացի նրանից, որ ծեփի հեռացման արդյունքում բացվեց տաճարի ներքին տեսքը, գմբեթի ներքին մակերևույթին ի հայտ եկան նաև բազմաթիվ վարպետանշաններ, որոնց համեմատումը տաճարի արտաքին նշանների հետ միանգամայն համոզում է, որ դրանք հիմնականում նախնական

---

[59] Հրատ. **Ա. Հարությունյան**, Եվս մի նորահայտ նվիրագիր Ս. Հռիփսիմեի վանքից, «Էջմիածին», 2013, Ժ., էջ 96-103: Նույնի Վաղարշապատ, էջ 258, արձ. 520:

[60] **Վ. Հարությունյան**, Պատմություն Ս. Էջմիածնի Մայր Աթոռի շինարարական գործունեության Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի գահակալության օրոք (1956-1980). Վերանորոգման և բարեփոխման աշխատանքներ Ս. Հռիփսիմեի եկեղեցում, «Էջմիածին», 1984, Գ., էջ 33: Տես նաև **Է. Մելիքյան**, Հռիփսիմե տաճարի վերակառուցումների բնույթը, «Գիտություն և տեխնիկա», 1978, Հմր 4 (176), էջ 22, **Հր. Հակոբյան**, Նորահայտ նյութեր Հռիփսիմեի տաճարի վերաբերյալ, «Հայկական արվեստ», Հմր 1, Հին և միջին դարեր, ծանոթագրությունը՝ **Յու. Թամանյանի**, Երևան, 1974, էջ 52:

ու անեղծ են, այսինքն՝ գմբեթը չի նորոգվել[61]: Այն, որ Ս. Հռիփսիմեի բարավորի արձանագրությունը ևս բացվել է վերոնշյալ նորոգման ժամանակ՝ որմերի ծեփը մաքրելիս, հավաստում է Հր. Հակոբյանը և որոշ բացատրություններ տալիս, մասնավորապես վիմագրի առնչությամբ նշում է, որ այն գտնվում է արևմտյան մուտքի վերին լուսնաձև քարին և բովանդակությամբ նվիրատվական է[62]:

Նորահայտ վիմագրի վերծանությամբ պարզվում է, որ նվիրատուն Սարգիս մոնթ Կոշեցին է, որը Հայոց ՉԾԱ. (1302) թվականին Ս. Հռիփսիմեի վանքին ընծայել է 1000 սպիտակ (արծաթե դրամ): Այն իրավունք չունեն օտարել ոչ մեծերը, ոչ փոքրերը, ոչ վանքի քահանաները և ոչ տանուտերերը, այսինքն՝ անձեռնմխելի է:

Ուշագրավ է, որ նվիրատվությունը կատարվել է ոչ թե վիմագրերում լայնորեն տարածված «սուրբ ուխտին» կամ «սուրբ եկեղեցոյս», այլ «Սուրբ Հռիփսիմի գերեզմանացս», որ, ըստ էության, այսպես է վկայված տաճարի՝ Ս. Հռիփսիմեի նահատակման տեղում կառուցված լինելու պատճառով, որտեղ էլ ամփոփված են վերջինիս նշխարները:

Ծագումով Այրարատ նահանգի Արագածոտն գավառի Կոշ գյուղից Սարգիսը վիմագրում մոնթ է հիշվում, այսինքն՝ վանական դպրոցի աշակերտ, պատանի, տիրացու, որ սպասավորում կամ աշակերտում է որևէ վարդապետի մոտ[63]: Ըստ էության, նա վիմագրում հիշատակված Զաքարյան Շահնշահի և նրա եղբայրների հովանավորությունը վայելող մեկն է, ով վերջիններիս բարեհաճությամբ Ս. Հռիփսիմե վանքին է հատկացրել նշյալ քանակությամբ դրամ և պատիվ

[61] **Վ. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 34:

[62] Ենթադրելի է, որ ճարտարապետը փորձել է ընթերցել արձանագրությունը և հոդվածում նշել է բովանդակության նվիրատվական բնույթը և ոչ ավելին: **Հր. Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 52:

[63] Հայերէն բացատրական բառարան, հ. երրորդ, կազմեց՝ **Ստ. Մալխասեանց,** Երևան, 1944, էջ 357:

ունեցել արձանագրությունը թողնելու տաճարի գլխավոր մուտքի բարավորին:

Վիմագրերում բազմաթիվ են այն դեպքերը, երբ Ս. Պատարագի դիմաց նվիրաբերվել են քսանական դահեկան, դեկան, ինչպես նաև արծաթ դրամներ: Վերջիններս կոչվել են նաև սպիտակ կամ ստակ: Դրամական նվիրատվությունները մեծամասամբ ուղեկցվել են «հալալ ինչք», «հալալ արդիւնք», «հոգւոյ բաժին», «արդար ինչք», «հոգւոյ պահուստ» և այլ արտահայտություններով[64], իսկ խնդրո առարկա վիմագրում այն պարզապես կոչվում է «հալալ պարտք», որը եզակի է իր տեսակում և կարելի է մեկնաբանել նվիրատուի կողմից իր իսկ ջանքերով, «հալալ քրտինքով» վաստակած դրամ, որն իբրև հոգու պարտք նվիրաբերվում է տվյալ հոգևոր հաստատությանը:

Համաձայն վիմագրի՝ նվիրատվության դիմաց Սարգիսն ստանալու է տարեկան երեք Ս. Պատարագ Հայտնության տոնին՝ մեկում՝ իր, մյուսում՝ Թաճերի, իսկ հաջորդին՝ Ազատկենի անվան հիշատակություններով:

Զարգացած միջնադարում Վաղարշապատի հոգևոր կենտրոնների և, մասնավորապես, Ս. Հռիփսիմե վանքի վերաբերյալ տեղեկությունները խիստ կցկտուր են: Սակայն, այս և համաժամանակյա մի քանի վիմագրերի առկայությունը փաստում է ճիշտ հակառակը, քանի որ նվիրատվության իրողությունը տվյալ հոգևոր հաստատությանը վկայում է, որ վանքը գործել ու որոշակի դերակատարություն է ունեցել:

Ս. Հռիփսիմե վանքի մնացած նվիրագրերն ուշմիջնադարյան են. նվիրաբերվում են մթերք, կենցաղային պարագաներ (աղ, ձեթ, բրինձ, խունկ, մոմ)՝ «լիտր» կշռային միավորի հիշատակմամբ[65], մի երևույթ, որը սակավադեպ է վիմագրե-

[64] **Լ. Սարգսյան**, Հայաստանի նվիրատվական արձանագրությունները. (9-14-րդ դարեր), Երևան, 2007, էջ 85:

[65] Ուշ միջնադարում «լիտր»-ի մեծությունն ընդունված է հաշվել այսպես կոչված երևանյան լիտրին համարժեք, այսինքն՝ 1 լիտրը

ռում: Նվիրատվական արձանագրություններում, սովորաբար, նշվում է նվիրաբերվող առարկան (անշարժ կամ շարժական գույք), որի դիմաց նվիրատուն կամ նվիրատուները ստացել են բարոյական հատուցում՝ հոգու փրկության համար Ս. Պատարագներում հիշվելու ակնկալիքով:

Ս. Հռիփսիմե տաճարի որմերի՝ «լիտր» կշռային միավորի հիշատակմամբ նվիրագրերը թվով 6-ն են, որոնցից երեքը փորագրված են արևմտյան պատին՝ մուտքից ձախ և կրում են Հայոց ՌՃՀԲ. (1723) թվականը[66]: Համաձայն այս երեք վիմագրերի՝ տարբեր նվիրատուների կողմից վանքին ընծայաբերվել են Ճ. (100) լիտր աղ (մոտ 500 կգ), Ե. (5) լիտր ձեթ (20 կգ) և Ա. (1) լիտր խունկ (5 կգ), որոնց դիմաց վանքի սպասավորները նվիրատուների անունները «որդոց որդի» պետք է հիշատակեին տարվա հինգ նավակատյաց կամ տաղավար տոների նախընթաց օրը:

Մյուս երեք վիմագրերից մեկը կրում է Հայոց ՌՃՀԷ. (1728) թվականը, իսկ երկուսը թվական չունեն, սակայն ժամանակակից են նախորդներին[67]: Այս վիմագրերում ևս նվիրաբերվում են Ի. (20) լիտր բրինձ (100 կգ), Ա. (1) լիտր մոմ (5 կգ) և Ա. (1) կարաս բաժկի կամ բաժկացու, այսինքն՝ հաղորդության անապակ գինի[68]:

Ս. Հռիփսիմե վանքի նվիրագրերից հատկանշելի է նաև նախասրահի հարավարևելյան մույթի արևմտյան նիստի քառատող արձանագրությունը, ըստ որի՝ նվիրատուն՝ ծագումով Ստամբուլից (Կ. Պոլսից) Աղեքսանդր վարդապետը,

---

հավասար է 12 ռուսական ֆունտի կամ 5 կիլոգրամի:

[66] Հրատ. **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 262, 264-265, արձ. 521, 525, 526:

[67] Նույն տեղում, էջ 262-264, արձ. 522-524:

[68] Այս մասին մանրամասն տես **Ա. Հարությունյան**, «Բաժակ» գինու նվիրաբերման վկայություններ հայկական վիմագրերում, «Էջմիածին», 2011, Բ., էջ 121-129:

վանքին է ընծայել 50 ոչխար որպես տամազլուխ՝ ի հիշատակ իրեն և իր ծնողների[69]:

Ամենայն հավանականությամբ Աղեքսանդր վարդապետը Քարաքաշ (Ղարաղաշ) մականվամբ նույն Աղեքսանդր Բ. Բյուզանդացի կամ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսն է, ով գահակալել է 1753-1755 թթ.: Մինչ կաթողիկոս օծվելը, նա հիշվում է որպես նվիրակ Եվդոկիայում[70]: 1755 թ. Աղեքսանդր Բյուզանդացին վախճանվել և թաղվել է Մայր տաճարի զանգակատան ներքնահարկում՝ գլխավոր մուտքի հարավային կողմում[71]:

Հարկ է նշել, որ Աղեքսանդր վարդապետի վիմագիրը եզակի է նրանով, որ նվիրատուն սուրբ ուխտին ընծայում է 50 ոչխար՝ որպես տամազլուխ, այսինքն՝ անասուն, որին պահում են բազմացնելու համար: Այն դասվում է գավառական բառերի շարքը և գործածվում նաև տամազլրխ, տամազլրդ, դամազլրխ ձևերով[72]:

Ս. Էջմիածնի միաբան Աբել արք. Մխիթարյանցը գրում է, որ 17-18-րդ դդ. Էջմիածնի վանքերին տրվում էին վարելահողեր, իսկ Մայր Աթոռից՝ լծկան և կթու անասուններ[73], իսկ Ս. Շողակաթի և Ս. Հռիփսիմեի վանքերը միաբանների համար հատկացվելիք հացն ու հանդերձանքը թեպետ ստանում էին Մայր Աթոռից, սակայն «նրանք ևս ունէին առատութեամբ վար ու ցանք և անասունք ոչ սակաւ, որով միաբանից ուտելիքը կպատրաստուէր»[74]:

---

[69] Հրատ. **Ա. Հարությունյան**, Նորահայտ արձանագրություն Ս. Հռիփսիմեի վանքից, ՊԲՀ, 2011, Հմ 2, էջ 192-199: Նույնի Վաղարշապատ, էջ 265, արձ. 527:

[70] **Մաղաքիա արք. Օրմանյան**, Ազգապատում, հ. Բ., Ս. Էջմիածին, 2001, սյուն 3331:

[71] Տապանագիրը տես **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 125-126, արձ. 140:

[72] Հայերէն բացատրական բառարան, հ. չորրորդ, կազմեց՝ **Ստ. Մալխասեանց,** Երևան, 1945, էջ 369:

[73] **Աբել Արքեպիսկոպոս Մխիթարեանց**, Երկերի ժողովածու, Ս. Էջմիածին, 2009, էջ 135:

[74] Նույն տեղում, էջ 138:

Ս. Հռիփսիմե վանքի վիմագրերից հատկանշելի է նաև տաճարի ավագ խորանի աջակողմում՝ որմնասյան արևմտյան նիստին պահպանված Հայոց ՉԽԵ. (1296) թվականը կրող արտոնագիրը[75] (նկ. 12), որը ևս ի հայտ է եկել Խրիմյան Հայրիկի օրոք՝ 1898 թ. տաճարի ներսում տարվող նորոգման աշխատանքների ժամանակ՝ որմերի ծեփը հեռացնելիս: Համաձայն վիմագրի՝ մի խումբ անձիք (Շիրին, Պայալուն խաթունները, Թողթան, Թալան, Խոճան, Ղայիրը), հավանաբար տեղի իշխանավորները, վերացնում են վանքից գանձվող բամբակի (վիմագրում՝ բաբակ) տասանորդը, ինչպես նաև շահնայի օգտին հավաքվող բամբակի լրացուցիչ հարկը:

Հայաստանում բամբակի մշակությամբ զբաղվել են դարեր առաջ, և դա արվել է պարբերաբար, քանի որ բամբակից գանձվող հարկերը և դրա օգտակարության մասին եղած փաստերն այդ են վկայում: Բամբակի մշակման առումով բացառություն չէր նաև Արարատյան դաշտը, ինչի վառ օրինակն է Ս. Հռիփսիմե տաճարի արձանագրությունը: Վիմագրի վերջում նշված է նաև գրչի՝ Վարհամի անունը: Վիմագրագետ Ս. Բարխուդարյանը նշում է, որ «գրիչ» վարպետները մեծ մասամբ եղել են նաև քարտաշներ, ովքեր կատարում էին նաև քանդակագործական տարբեր աշխատանքներ[76]: Տաճարի որմերի տարբեր մասերում, ինչպես նաև ներսում կան հիշատակագրություններ, մի քանիսն էլ եղծված են և որոշակի իմաստ չեն արտահայտում:

Եկեղեցու ավագ խորանի ձախ ավանդատան ներսում, որտեղից բացվում է դամբարանի մուտքը, ինչպես արդեն նշել ենք, արձանագիր քարեր են դրված: Դրանցից մեկը խաչքարի կոտրված պատվանդան է, որի առջևի մասում նկատելի է

[75] Հրատ. **Գ. Հովսեփյան**, Կոմիտաս կաթուղիկոսի մի նոր արձանագրութիւն, էջ 442: **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 267, արձ. 528:

[76] **Ս. Բարխուդարյան**, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 199, 202:

կիսաեղծ արձանագրություն: Դատելով ընթեռնելի հատվածից՝ խաչքարը կանգնեցվել է 1195 թ., Կարապետի և իր որդի Գրիգորի հիշատակին, որոնց հոգու փրկության համար ընթերցողներից հայցվում է աղոթք բարձրացնել առ Աստված[77]:

Հարևանությամբ դրված շինաքարերից մեկի վիմագիրը, որն ըստ Մ. Բրոսսեի՝ նախկինում ագուցված է եղել Մայր տաճարի պարսպապատի «Կալի» դռան ձախ կողմում, կրում է 1801 թ. և բովանդակում է սրբազան հայրապետի Աթոռն անսասան պահելու համար առ Աստված բարեխոսություն[78]: Դատելով թվականից՝ հիշատակված սրբազանը պետք է որ Դանիել Սուրմառեցին (1801-1802, 1807-1808) լինի, որի հետ զուգահեռ հայրապետական Աթոռին մշտապես հավակնեց նաև Դավիթ Էնեգեթցին (1801-1807): Նրանց պայքարը պատմության մեջ մնաց «Դավիթ-Դանիելյան գավազանակռիվ» անվամբ:

Տաճարի արևելյան պատի ձախակողմյան խորշում տեղ է գտել ապագա կաթողիկոս Հակոբ Շամախեցու (1759-1763) անվան 1721/2 թվակիր փակագիրը[79] (նկ. 13): Նմանատիպ փակագիր կա նաև Ս. Գայանե վանքի նախասրահի մույթերից մեկի արևմտահայաց նիստին: Հակոբ Շամախեցին մինչ կաթողիկոս օծվելը եղել է հայրապետական Աթոռի տեղապահ:

Ինչպես տաճարի, այնպես էլ նախասրահի մույթերի տարբեր մասերում պահպանվել են առավելապես 18-րդ դարին բնորոշ համառոտ հիշատակագրություններ, որոնց հատուկ անդրադարձն անտեղի ենք համարում:

[77] Հրատ. **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 268-269, արձ. 529:

[78] Հրատ. **Brosset M.,** Rapports sur un Voyage Archiologique dans la Georgie et dans l'Armenie, p. 12. **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 270, արձ. 536:

[79] Հրատ. **Ս. Սաղումյան**, Փակագրությունը հայ վիմագրության մեջ, ԼՀԳ, 1980, Հ՝ 3, էջ 89: **Գր. Գրիգորյան**, Հայկական վիմագրություն, Երևան, 2000, էջ 179, արձ. 95: **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 269, արձ. 531:

Գ. ԽԱՉՔԱՐԵՐ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ս. Հռիփսիմե վանքի կոթողային հուշարձաններից պետք է առանձնացնել հատկապես խաչքարերը, որոնց մեծ մասն արձանագիր է: Սրանք ծագումով տարբեր վայրերից են: Ուշագրավ է առանձնապես վանատան հարակից այգում կանգնեցված խաչքարը՝ հարազատ 11-12-րդ դդ.: Պակաս ուշագրավ չէ նաև տաճարի արևմտյան խորանում կանգնեցված Օշականից բերված խաչքարը (նկ. 14), որը, ցավոք, արձանագրություն չունի: Նախկինում այն բաժանված է եղել բեկորների, հետագայում ամբողջացվել ու ներառվել է մետաղե շրջանակի մեջ: Հ. Պետրոսյանը, ելնելով խաչքարի քանդակային մի շարք առանձնահատկություններից (խաչատակի հորիզոնական արմավազարդ, խաչաթևերի եռաելուստ վերջավորություններ, երկրաչափական հյուսածո քանդակներ), այն թվագրել է 11-րդ դարով՝ դասելով քարե շրջանի մեջ ներառված ծավալային խաչերի շարքը, որոնք տիպաբանորեն աղերսվում են «իռլանդական» կոչվող խաչերի հետ[80]:

Մինչ վանքի շրջակայքում գտնվող արձանագիր խաչքարերի մասին խոսելը նշենք, որ տաճարի պատերին, արտաքուստ, ագուցված են 17-18-րդ դդ. բնորոշ փոքրաչափ խաչքարեր. բոլորն էլ արձանագիր են[81]: Նրանցից մեկն ագուցված է տաճարի հարավային մուտքի վերնամասում (նկ. 15): Մարմարյա խաչքարի բարձրարվեստ փորագրությամբ աչքի ընկնող քառատող վիմագրի համաձայն՝ այն կերտվել է 1653 թ., ծագումով Խալխալենց տոհմից Հովհաննեսի հիշատակին, որը Ծ. (50) թուման է նվիրաբերել Ս. Հռիփսիմե վանքի նորոգման համար: Հիշենք, որ Փիլիպոս կաթողիկոսի օրոք՝ 1653 թ., վանքում իրականացվել էին նորոգչական մեծածավալ աշխատանքներ, որոնց մասին էր վկայում նաև տաճարի արևմտյան պատի վերնամասում ագուցված խաչքարի վիմագիրը: Այս հիշատակագրությունը վերստին հաստատում է այդ իրողությունը[82]:

17-18-րդ դդ. բնորոշ քանդակային լուծումներով փոքրաչափ մեկ այլ խաչքար է ագուցված տաճարի արևելյան պատի վերին ճակտոնային մասում: Արձանագրությունը հիմնականում փորագրված է խաչաթևերի անկյուններում, համաձայն որի՝ այն կերտվել է ուստա Տիրատուրի հիշատակին[83]: Ուստա, այսինքն՝ վարպետ Տիրատուրն, ըստ էության, խաչքարագործն է, որը մասնակցել է նաև տաճարի նորոգման աշխատանքներին:

Բակի խաչքարերից շատերը հայտնաբերվել են Մայր Աթոռում՝ 1896-1897 թթ. ընթացքում տարվող հին վեհարանի, տպարանի և երբեմնի ժառանգավորաց դպրոցի (վարժարանի) ավերակների մաքրման աշխատանքների ժամանակ: Հայագետ Գալուստ Տեր-Մկրտչյանը 1897 թ. կազմել է այդ խաչքարերի և դրանց վիմագրերի համապատասխան ցուցակը, որում նշված խաչքարերը ներկայումս շարված են Ս. Հռիփսիմե վանքի արևելյան պարսպապատին կից: 24 խաչքարերից 6-ն ամբողջական է, 3-ը՝ երկատված, 8-ը՝ արձանագիր, 13-ը՝ առանց գրության, իսկ 2-ը՝ եղծված արձանագրությամբ: Բացի խաչքարերից և քանդակազարդ բեկորներից, հայտնաբերվել են շուրջ 1600 տարբեր տեսակի պղնձյա ամաններ (հիմնականում արձանագիր), որոնք, հավանաբար, ծառայել են Մայր Աթոռի միաբանության կենցաղային կարիքների համար:

---

[80] **H. Petrosyan,** Similarities between the Early Christian Armenian Monuments and Irish High Crosses in the light of New Discoveries, Studies in Language, History and Narrative, Journal of Indo-European Studies Monograph Series 61, Washington, 2012, p. 178, illus. 19. տես նաև նույնի Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2008, էջ 52:

[81] Փոքր չափերի մեկական խաչքարեր են ագուցված տաճարի արևմտյան որմի զույգ խորշերի մեջ, որոնք բավականին վատ են պահպանված: Ձախակողմյան խորշում ագուցված խաչքարն արձանագիր է. հիմնախաչի հորիզոնական թևերի վերնամասում ընթեռնելի է «ԳԱՅԱՆԷ» անձնանունը. թերևս պետք է ենթադրել, որ խաչքարը կերտվել է ի հիշատակ կամ ի բարեխոսություն Գայանեի:

[82] Հրատ. **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 273-274, արձ. 538:

[83] Հրատ. **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 274, արձ. 539:

Հնագիտական նշանակություն ունեցող իրերի մասնագիտական ուսումնասիրությունը Նիկողայոս Մառի խորհրդով ռուսական կայսերական հնագիտական հանձնաժողովը հանձնարարել է Գ. Տեր-Մկրտչյանին: Վերջինս ձեռնամուխ է եղել գործին և ավարտուն տեսքի բերել բոլոր արձանագրությունների վերծանությունները՝ գրեթե անփոփոխ վերարտադրելով խաչքարերի վրա փորագրված բնագիրը, ապա ծանոթագրություններում տեղեկություններ է հաղորդել հայտնաբերման վայրի, կասկած հարուցող ընթերցումների մասին՝ հարկ եղած դեպքում բացատրել դրանք: Գ. Տեր-Մկրտչյանի անտիպ մնացած հիշյալ աշխատությունը գիտական շրջանառության մեջ է դրել հայագետ Պիոն Հակոբյանը[84]:

Բակի խաչքարերից հարկ է առանձնացնել տաճարի արևելյան կողմում՝ մեծադիր պատվանդանի վրա կանգնեցված խաչքարը (նկ. 16): Երկուսն էլ արձանագիր են և տարբեր ժամանակների են պատկանում: Պատվանդանը կրում է Հայոց ՉԼԱ. (1282) թվականը և ըստ չափածո վիմագրի՝ կանգնեցրել է Վահրամ «կսկծալին» իր զավակների՝ Շնոհորիկի և Թամամի հիշատակին, որոնք կյանքից հեռացել են երիտասարդ հասակում՝ կսկիծ թողնելով ծնողների սրտում[85]: Պատվանդանը Վաղարշապատ է բերվել 1874 թ. Սուրմալու գավառի Խալֆալու գյուղից:

[84] Պ. Հակոբյանն այդ արձանագրությունները հրատարակել է նախ «Էջմիածնի վիմագրերը Գալուստ Տեր-Մկրտչյանի վերծանմամբ» հոդվածում («Մշակույթ», 1990, Հմր 2-3, էջ 80-88), ապա ներառել մեծանուն հայագետի գիտական ժառանգությունն ամփոփող մատենաշարի Բ. հատորում՝ «Նոր արձանագրություններ խաչքարերի վրա» խորագրով (**Գալուստ Տեր-Մկրտչյան,** Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ., աշխատասիրությամբ պրոֆ. **Պ. Հակոբյանի,** Ս. Էջմիածին, 1998, էջ 353-359):

[85] Հրատ. **Ալիշան**, էջ 125: **Կ. Բասմաջեան**, Մեր հնութիւնները, «Բանասէր», Փարիզ, 1901, Հմր 1-4, էջ 133: **Պ. Հակոբյան**, Էջմիածնի վիմագրերը..., էջ 86: **Գ. Տեր-Մկրտչյան,** Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ., էջ 353: **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 275, արձ. 540:

Ինչ վերաբերում է բուն խաչքարին, ապա քանդակային և տառաձևերի հնագրական առանձնահատկություններով այն առավելապես բնորոշ է 16-17-րդ դդ.: Քիվի երկտող արձանագրության համաձայն՝ կանգնեցվել է Հովհաննեսի որդի Զարգարի բարեխոսության կամ հոգու փրկության համար[86]:

Արևելյան պարսպապատի տակ շարված խաչքարերից ժամանակագրորեն վաղագույնը կրում է Հայոց ՊՀԳ. (1424) թվականը և կանգնեցվել է ոմն Նաբրիքի հիշատակին[87]: Մյուսները հարազատ են 16-17-րդ դդ.՝ կանգնեցված Ակոբջանի (1552 թ.), Մարգարի (կազմող՝ Սանվել, 16-րդ դ.), Աթանասի, Ազամաթի, Աստվածատուրի, Ղազարի, Մարտիրոս եպիսկոպոսի (ով վերանորոգում է կատարել Մելքիսեթ կաթողիկոսի հրամանով) հիշատակի ու բարեխոսության համար[88]:

Դ. ՏԱՊԱՆԱԳՐԵՐԸ

Այն, որ Ս. Հռիփսիմե վանքը վերստին գործել և կանոնավոր միաբանություն է ունեցել 1653 թ. նորոգման աշխատանքներից ի վեր, վկայում են կից գերեզմանոցի շուրջ հինգ տասնյակ տապանաքարերը, որոնցից ավելի քան 30-ն արձանագիր են: Արձանագրությունների մեծ մասն առաջին անգամ հրատարակվել է տողերիս հեղինակի «Վաղարշապատ» գրքում, հետևաբար, այստեղ կփորձենք զանց առնել մանրամասն վերլուծությունները:

[86] Հրատ. **Պ. Հակոբյան**, Էջմիածնի վիմագրերը..., էջ 86: **Գ. Տեր-Մկրտչյան,** Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ., էջ 355: **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 277, արձ. 541:

[87] Հրատ. **Պ. Հակոբյան**, Էջմիածնի վիմագրերը..., էջ 87: **Գ. Տեր-Մկրտչյան,** Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ., էջ 355: **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 277, արձ. 542:

[88] Արձանագրությունների վերծանությունները տես **Պ. Հակոբյան**, Էջմիածնի վիմագրերը..., էջ 86-87: **Գ. Տեր-Մկրտչյան,** Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ., էջ 354-356: **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 278-279, արձ. 543-550:

Նախ նշենք, որ ենթադրվում է, թե տաճարի ավագ խորանի դիմաց է թաղվել Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսը, որտեղ այսօր էլ պահպանվել է տապանաքար հիշեցնող մեծադիր սալաքարը: Տաճարի հյուսիսային խորանում է հանգչում Փիլիպոս Աղբակեցի Ամենայն Հայոց կաթողիկոսը, որն ինչպես վերը նկատեցինք, Ս. Հռիփսիմե և Ս. Գայանե վանքերի նորոգության նախաձեռնողը դարձավ: Նա է սկսել նաև Մայր տաճարի զանգակատան շինարարությունը, բայց վախճանվեց, երբ ավարտվել էր միայն ներքնահարկի կառուցումը, իսկ մնացածն ավարտին հասցրեց Փիլիպոսի հաջորդ Հակոբ Ջուղայեցի (1655-1680) կաթողիկոսը: Մեծանուն հայրապետի մարմարյա ուղղանկյունաձև շիրմաքարը տեղադրվել է Եփրեմ Ձորագեղցի (1809-1830) կաթողիկոսի նախաձեռնությամբ՝ 19-րդ դարասկզբին (նկ. 17): Տապանաքարի չափածո արձանագրությունը ժամանակի վիմագիր բանաստեղծության ինքնատիպ նմուշներից է, որի հանգավոր տողերում մեծանուն հայրապետը հիշվում է իբրև «սքանչելագործ»[89]:

Ս. Հռիփսիմե վանքի 1958-1959 թթ. վերանորոգման աշխատանքների ընթացքում տաճարի ավագ դռան դիմաց հայտնաբերվել է երկու գերեզման: Համաձայն Սիմեոն Երևանցու, Հովհ. Շահխաթունյանցի, Մ. Օրմանյանի և այլոց վկայությունների՝ այդտեղ են թաղվել կաթողիկոսներ Աստվածատուր Համադանցին (1715-1725) և Կարապետ Ուլնեցին (1726-1729): Նրանց տապանագրերն անհետացել են դեռևս 19-րդ դարի սկզբներին: Վազգեն հայրապետի հրամանով գերեզմանների վրա արձանագիր մարմարե նոր սալաքարեր են տեղադրվել[90]:

[89] Հրատ. **Ալիշան**, էջ 240: **Ռ. Մարտիրոսյան**, Հռիփսիմեի տաճարը, «Էջմիածին», 1953, Բ., էջ 28: **Վ. Յարութիւնեան**, Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները, էջ 18: **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 280, արձ. 551:

[90] **Վահան վրդ. Տերյան**, Պատմական համառոտ ակնարկ..., «Էջմիածին», 1961, Բ., էջ 38:

Դառնալով վանքի միաբանական գերեզմանոցին՝ նշենք, որ այն տաճարի արևելյան կողմում է: 19-րդ դարավերջին Երեմիա Վաղարշապատցու կառուցած հարավարևելյան պարիսպն այն բաժանում է երկու մասի: Գերեզմանոցում առկա են հիմնականում օրորոցաձև և հարթ ուղղանկյունաձև տապանաքարեր, որոնք թվագրվում են 17-19-րդ դդ.:

Ուշագրավը մեծանուն գիտնական, աստվածաբան ու թարգմանիչ, Ս. Էջմիածնի միաբան Ստեփանոս Լեհացու շիրմաքարի չափածո արձանագրությունն է[91]: Ուսումնասիրողներն այս տապանագրին բազմիցս են անդրադարձել և ամեն անգամ կռվան դարձրել թվականի վերծանության հարցը: Բանն այն է, որ բառերով գրված թվականի հատվածը տեղ-տեղ եղծված է և առաջին հայացքից տարակարծությունների տեղիք է տալիս: Չծավալվելով ուսումնասիրողների վաղուց ի վեր հնչեցրած տեսակետների շուրջ՝ նշենք միայն, որ թերևս հաջողվեց վերջնականապես հստակեցնել Ստեփանոս Լեհացու մահվան ստույգ թվականը, որ է՝ 1689 թ.: Տապանագրում այն հետևյալ ձևակերպումն ունի. «...ՀԱՋԱՐ ՀԱՐԻՒՐ ԸՆԴ ԵՐԵՍՆԻ, ԿՐԿԻՆ ՔԱՌԵԱԿ ԹԻՒ ՀԱՅԿԱԶՆԻ», այսինքն՝ զույգ, կրկնակի չորս իմաստով, ուստի 1130 թվականին, որը հստակ է, պետք է գումարել 8, կստացվի՝ 1138+551=1689, հետևաբար Ստեփանոս վարդապետ Լեհացու մահվան ստույգ տարեթիվը պետք է համարել 1689 թ., ինչպես նախկինում փաստել են նաև Խաչիկ Դադյանը, Ներսես Ակինյանը, Լեոն և այլք:

Նշենք, որ Ստեփանոս Լեհացին մեծ վաստակ ունի նաև Էջմիածնի գրատան կազմավորման ու բազմաթիվ ձեռագրերի ընդօրինակման գործում, որոնց հիշատակարաններում նա հաճախ իբրև գրիչ, թարգմանիչ կամ ստացող է հիշվում: Մեզ հայտնի առաջին մատենադարանապետը Ստեփանոս Լեհացու

[91] **Շահխաթունեանց**, էջ 191: **Ալիշան,** էջ 241:

աշակերտներից Ներսես սարկավագն է[92]: Հատկանշելի է նաև Ներսես պարոնտերի եղբայր Գասպար պարոնտերի 1709 թվակիր տապանագիրը[93]: Պարոնտերեր հիշատակվում են նաև Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցի տապանագրերում: Այս պաշտոնի բացատրությունը, թերևս, պետք է կապել հոգևոր ավատատերերի դասը ներկայացնող պարոնտիրության ինստիտուտի հետ կամ նրանց համարել էջմիածնի հարկատու ճորտեր, որպիսիք հայտնի են հիշյալ ժամանակաշրջանում:

Ս. Հռիփսիմե վանքի միաբանական գերեզմանոցում են հանգչում նաև ծագումով Ակնի Ապուչեխ գյուղից Մարգար ճգնազգյաց վարդապետը (1717 թ.), վանքի առաջնորդ Ավետիս վարդապետը (1762 թ.), Հակոբ վարդապետը, վանահայր և ժամօրհնող Հարություն Ստամբուլցին (՞), երաժիշտ, ժամասաց և դասասաց Ղազար վարդապետ Աստապատցին[94], Պետրոս րաբունին, իսկ վանքի արևելյան պարսպապատի արտաքին կողմում են հանգչում Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի եղբայր Եսային (1656 թ.), մահտեսի Թորոսը (1688 թ.), Թադեոսի որդի Սարգիսը (1689 թ.), Տեր Զաքարի որդի Կիրակոսը (1761 թ.), տեղի միաբաններ Ալեքսան վարդապետը (1776 թ.), Թորոման վարդապետը (1776 թ.), Մուքելի որդի Խաչատուրը (1776 թ.), վանքի լուսարար Անտոն վարդապետը (1782 թ.), Դավիթ Էնեգեթցի կաթողիկոսի մայր և Դավթյան Բերոյի կողակից Աննան (1784 թ., նաև՝ վրացերեն[95]), Գրիգոր րաբունու մայր Մարիամը

[92] **Օ. Եգանյան,** Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա., կազմեցին՝ **Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան,** Երևան, 1965, էջ 20:

[93] Հրատ. **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 285, արձ. 553:

[94] Հրատ. **Շահխաթունեանց,** էջ 192: **Ալիշան,** էջ 241: **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 287, արձ. 558:

[95] Հրատ. **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Պատմա-բանասիրական պրպտումներ, աշխատասիրությամբ **Պ. Մուրադյանի,** Ս. Էջմիածին, 2010, էջ 386-387: **Պ. Մուրադյան,** Հայաստանի վրացերեն

(1795 թ.), վաղամեռիկ տիրացու Արությունը, տիրացու Մնացականի որդի Սարգիսը և այլք[96] (նկ. 18):

* * *

Մեր խոսքն ամփոփելով նշենք, որ Ս. Հռիփսիմե տաճարը նորոգվել է նաև 1985 թ., իտալահայ Մարի Հյուսիսյան-Մնտիկյանի մեկենասությամբ, որն արձանագրված է տաճարի գլխավոր մուտքի բարավորին (նկ. 19), ներքուստ: Ճարտարապետ Ա. Գալիկյանի և ինժեներ Ավ. Թեքնեճյանի նախագծով 1986-1987 թթ. իրականացվել է նաև զանգակատան հիմնական նորոգումը[97]: Հիշյալ նորոգումների ժամանակ ճարտարապետ Ա. Գալիկյանի նախագծով փոխվել են տաճարի մուտքերի փայտե դռները: Հարավային մուտքի դուռը երկու կողմից աչքի է ընկնում ինքնատիպ փորագրությամբ (նկ. 20աբ). արտաքինից դռան վերնամասը հարդարված է երեք փոքր կամարներով, կենտրոնում՝ Ս. Հռիփսիմեն՝ «Ս. ՀՌԻՓՍԻՄԷ» մակագրությամբ, երկու կողմում՝ հրեշտակներ, իսկ ներսից դարձյալ եռակամար է, կենտրոնում՝ խաչ, երեք գոտկաձև երիզներին Կոմիտաս կաթողիկոսի՝ Հռիփսիմյանց կույսերին ձոնած «Անձինք նուիրեալք»[98] սքանչելի շարականի հետևյալ տողերն են.

ՀՌԻՓՍԻՄԷ ՄԵԾ ԽՈՐ/ՀՈՒՐԴ ԱՆՈՒՆ ՅԱՆԿԱԼԻ/
ԸՆՏՐԵԱԼ Ի ՅԵՐԿՐԻ:
ԱՆՁԻՆՔ ՆՈՒԻՐԵԱԼՔ/ ՍԻՐՈՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ/
ԵՐԿՆԱՒՈՐ ՆԱՀԱՏԱԿՔ[99]:

արձանագրությունները, Երևան, 1977, էջ 91: **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 290, արձ. 569:

[96] Տապանագրերի վերծանությունները տես **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 285-291, արձ. 554-574:

[97] **Վ. Յարութիւնեան**, Եկայք շինեսցուք, էջ 65:

[98] **Գ. Ա. Հակոբյան,** Կոմիտաս կաթողիկոսի «Անձինք նուիրեալք» շարականը, «Էջմիածին», 1976, Ա., էջ 25-26:

[99] Հրատ. **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ, էջ 271-272, արձ. 537:

Կոմիտաս մեծանուն հայրապետի այս տողերով էլ եզրափակում ենք մեր գրքույկը և հետևելով երջանկահիշատակ Շնորհք արք. Գալուստյանի բնորոշմանը՝ վերստին արձանագրում, որ Հռիփսիմյանց կույսերի հանդեպ հայ ժողովրդի խոնարհումը դրսևորվել է մշակութային գլուխգործոցներով. առաջինը Ս. Հռիփսիմե տաճարն է, երկրորդը՝ ի պատիվ Հռիփսիմյանների հորինված շարականը՝ երկուսն էլ ստեղծված Կոմիտաս կաթողիկոսի ձեռամբ[100]:

[100] **Շնորհք արք. Գալուստեան,** Հայազգի սուրբեր, Երևան, 1997, էջ 212:

Նկ. 1. Վաղմիջնադարյան եկեղեցու ավերակները տաճարի արևելյան կողմում



Նկ. 2. Բաց խորան, 1997 թ.

Նկ. 3. Ս. Հռիփսիմեի դամբարանը և տապանաքարը, 1986 թ.

Նկ. 4. Օձունի վաղմիջնադարյան այան պատկերաքանդակներից. Ս. Հռիփսիմեի դամբարանը

Նկ. 5 ա, բ, գ. Պատուհանի պսակ, 7-րդ դար

Նկ. 6. Կոմիտաս կաթողիկոսի շինարարական վիմագիրը, 7-րդ դ.

Նկ. 7. Կոմիտաս կաթողիկոսի երկրորդ վիմագիրը, 7-րդ դ.

Նկ. 8. Ճիծեռնակապոչ բռնակներով հուշատախտակ

Նկ. 9. Հատված Սիմեոն Երևանցու օրոք կառուցված պարսպից, 1776 թ.

▼ Նկ. 10. Պարսպի հարավային շքամուտքի վերնամասը, 1894 թ.



Նկ. 11. Նվիրատվական արձանագրություն տաճարի արևմտյան մուտքի բարավորին, 1302 թ.



◤ Նկ. 12. Արտոնագիր, 1296 թ.

◀ Նկ. 13. Հակոբ Շամախեցու անվանակիր փակագիրը. 1721 թ.

▲ Նկ. 14. Խաչքար՝ ծագումով Օշականից 11-րդ դ.



Նկ. 15. Ագուցված խաչքար՝ տաճարի հարավային մուտքի վերնամասում, 1653 թ. ▶

Նկ. 16. Խաչքար՝ 16-րդ դ., պատվանդան, 1282 թ. ▼

Նկ. 17. Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսի տապանաքարը, տեղադրված 19-րդ դարում ◢



Նկ. 18. Նորաբաց տապանաքարեր միաբանական գերեզմանոցում, 18-րդ դ.

Նկ. 19. Ս. Հռիփսիմե տաճարի 1985 թ. նորոգման արձանագրությունը

Նկ. 20 ա, բ. Եկեղեցու հարավային դուռը



Ս. Հռիփսիմե վանքը 19-րդ դարի առաջին կեսին

Ս. Հռիփսիմե տաճարի ավագ խորանը և Ս. Սեղանը

ՀԱՎԵԼՎԱԾ

ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄՅԱՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ[101]

Սուրբ Հռիփսիմյանների կյանքի, վարքի և զանազան վայրերի մասին, որ գրված չեն բազմաքանակ ճոխաբան պատմությունների մեջ, քննության առնելով բազում հույն մատենագիրների և ըմբռնելով ճառերի միտքը, որոնք կեղծիքից հեռու էին և ճշմարտությամբ լի, կարգեցի քեզ համար այս գրվածքի մեջ, որին, կարծում եմ, միտք ունեցողներից ոչ ոք չի ընդդիմանա, բացի նրանից գուցե, ով, կեղծիքը սիրելով, կջանա աղավաղել այս պատմության ոճը: Երբ Ատտիկեում ընթերցում էի էլլադացի իմաստունների ատենաբանությունները, շատ անգամ եմ հանդիպել այս գրվածքի ոճին, որը հարմար էր գալիս մեր այս պատմության հյուսմանը: Մեզ հույժ պիտանի և օգտակար է թվում Դավիթ Հռոմեացու «Եկլեսիաստես» անվանված գիրքը, որ ես թարգմանել կամեցա և ժամանակ չունեցա. մնաց այլ տեղի և կամ իմաստունի: Քանզի ես, լինելով մահկանացու, ծեր և հիվանդոտ, հրեշտակ կամ Բարձրյալի որդի չլինելու պատճառով երկնչելով, ինչպես որ ասում է աստվածային խոսքը, փոքրինչ երկրորդեցի նույն այն գիրքը, որ թողել է հմուտ քարտուղար Ագաթանգեղոսը, որն, իհարկե, չէր կարող բոլոր խոսքերն ու գործերն իր մտքի մեջ ծովացնել և ուրիշներին էլ [ասելիք] թողեց:

Եվ արդ, նույն այդ գրքում պատմվում է, որ սուրբը նույն թագավորական տոհմից էր, ինչ Օգոստոս կայսրը՝ թագավորների ցեղապետը: Գայանեն նույնպես նույն ցեղից էր՝

[101] **Մովսես Խորենացի**, Աստվածաբանական երկեր, Ս. Էջմիածին, 2007, էջ 41-48:

առաքինի և զարմանալի հոր և մոր դուստր: Առաքելական դասերին նախանձախնդիր լինելով, ինչպես գրում է, նրանք իրենց իմացությամբ շատ մոտ էին նրանց, որոնց հին համբավ ունեցող գործերը մոռացության չէին մատնել՝ ընտելանալով կամ ծուլանալով, ինչպես որ մեր ժամանակներում է, երբ աստվածապաշտությունը նվաղել է, սրբությունը՝ լռել, իսկ մեղքը՝ գլուխ բարձրացրել: Այլ տղամարդիկ առաքյալների նման լավ գործերին էին նախանձախնդիր, իսկ կանայք զգաստանում էին՝ նախանձելով Աստվածածնին, Քրիստոսի մայրեր լինելով, ինչպես ասաց հայրերից մեկը: Այսպիսին էին նաև Սուրբ Հռիփսիմեի ծնողները, որն Ավազանից ի վեր սանն էր Սուրբ Գայանեի, որը վանական կույսերի մայրն էր Հռոմում գտնվող Սուրբ Պողոս առաքյալի վանքում, որը երանելին իրեն տեղ ընտրեց՝ առաքյալից հրաման ստանալով՝ պարտ և պատշաճ կերպով աղոթելու. և նրանից հետո ուրիշներն էլ աշակերտեցին՝ երեք հարյուր հոգի՝ պահելով առաքյալի այս հրամանը: Եվ լինելով այս վայրի տեսուչը՝ Գայանեն Հռիփսիմեին դաստիարակեց իր մոտ՝ զգաստացած կույսերի մեջ, և երբ նրա աղոթքի պտուղն արբունքի հասավ, տեսնելով նրա հոգու մեծանձնությունը, Սուրբ Աստվածածնի աղախինը լինելու պատվին նրան կարգեց և տվեց՝ ուխտերով և աղոթքներով ծառայելու Աստվածածնին: Նրա պարանոցն է գցում նաև Սուրբ Հակոբ [Տյառնեղբոր] խաչը՝ տերունական արյամբ ներկված, որը հատվել էր Կենաց Փայտից Պատրոնիկե տիկնոջ խնդրանքով, որը և ինքն էր պահպանել նույն Տյառնեղբոր միջոցով, և մեծ փափագով ու երկյուղածությամբ առավ և գցեց մեծ Սուրբ Հռիփսիմեի պարանոցը, ինչպես որ մի ժամանակ Ռեբեկայի ականջներին գինդերը [գցեցին]՝ հարսնանալու հավատքի հայր Աբրահամին. թեպետ և [դրանք իրար] նման չեն, բայց երկուսն էլ Եկեղեցու խորհրդի համար եղավ. և այս մասին՝ այսքանը:

Եվ երբ հուզումնալից ժամանակը հասավ, ազնվական ծագման և սքանչելատեսիլ գեղեցկության համար նրան, ով աշխարհում նույնպես փայլում էր հոգով, որոշեցին տիեզերապետության թագուհին դարձնել՝ ի պատիվ հռոմեացիների տան: Եվ Գայանեն, հոգու աչքով [այդ մասին] իմանալով, առնում է նրան, փախչում Եգիպտոս՝ Աղեքսանդրիա [քաղաքը]. այնտեղից էլ գնում է Երուսաղեմ՝ երկրպագելու տեղի սուրբ վայրերը: Եվ, մտնելով քարայրը, Սրբուհու առաջ աղոթքներ և պաղատանքներ էին մատուցում, որ օգնի վտանգված և փախցված կույսին, որը նրա աղախինն էր եղել մանկությունից: Այնտեղից գնացին Գեթսեման՝ Աստվածածնի գերեզմանը. և [Գայանեն], այնտեղ աղոթելով, ասում էր. «Մայր Լուսո, Կո՛ույս անարատ, որ կուսության վերակացու ես և սրբության օգնական, ընդունի՛ր աղերսական աղոթքներն անարժան աղախնուցս. և իմ հոգեորդուն, որ սնեցի՝ քեզ աղախին տալով, զգաստացնելով արդարացրո՛ւ արժանավորապես և մի՛ թող, որ օտարը փորձության ենթարկի նրան, և մի՛ թող, որ աղտեղանա պիղծ թագավորների ձեռքով, որպեսզի մեր՝ քեզ հետ կապած ուխտը չխափանվի: Այլ հիշի՛ր իմ պանդխտությունը և մեր կյանքի ալեկոծումները, որոնք քեզ համար են, հիշի՛ր և քո Որդու և մեր Աստուծո չարչարանքները և ողորմի՛ր մեզ, որի համար օրհնում ենք քեզ»: Եվ, Աստվածածնին երկրպագելով և շատ արտասուք հեղելով, մեկ ամիս մնացին այնտեղ: Ապա [Աստվածածինը] տեսիլքով երևաց սուրբերին, և հրաման ստացան գնալ Հայք՝ Արարատյան երկիրը, Թադեոս առաքյալի վիճակը: «Եվ այն փայտեղեն պատկերը, որ դրված է եղել իմ վերափոխման օրը, այ՛ն փնտրեք՝ ձեր կյանքի ուղին ավարտելով արյամբ»:

Եվ, այնտեղից խնդությամբ դառնալով, եկան Եդեսիա քաղաքը և, երկրպագելով փրկչական պատկերին, ուրախությամբ լցվեցին, և թվաց նրանց, թե մարմնացած Բանն են տեսնում: Դարձյալ սքանչելի տեսիլքը տեսնելով՝ հորդորվում էին ճգնությունների: Եվ կանանց մի մասը, նրանցից բաժանվելով,

մնաց նույն քաղաքում, Աբգարի մեծ եկեղեցում՝ կրոնավորելով Սուրբ Թադեոսի [դրած] հիմքի վրա: Նույնպես էլ մնացին այնտեղ՝ Դարանաղյաց գավառում, Սեպուհ կոչվող լեռան խորշում, որ անվանվեց Մանյա այրք:

Սուրբերից ավելի քան յոթանասուն հոգի, ասում է պատմագիրը, ելնելով նրանց հետ հռոմեացիների քաղաքից, բնակություն հաստատեց զանազան վայրերում: Իսկ տեղում մնացած քույրերը և Գայանեի Եվզոյի անունով քույրը, քույրերի հետ միաբանված, բարի վկայությամբ նահատակվեցին ամբարիշտ Դիոկղետիանոսի կողմից, որն իր չարության թույնը նրանց վրա թափեց, ովքեր Քրիստոսի վկաներ դարձան՝ մեծ առաքելուհուն մահվան վճռով չբռնելու պատճառով: Եվ բազում տառապանքներով եկան, հասան Բզնունյաց գավառ, Խլաթ քաղաք՝ երեկոյան այնտեղ օթևանելով: Եվ այնտեղից տեղափոխվեցին և գնացին Մոկաց գավառը՝ Սուրբ Խաչ կոչվող վայրը, որտեղ Աստված մեծ սքանչելիքներ կատարեց նրանց միջոցով՝ Եսայու և Դանիելի պատվական սուրբ Խաչով, որի մասին թե՛ ես և թե՛ դու գիտենք, և արժե՛ արդյոք երկրորդել: Երբ առաքելանման քահանաներն ու սուրբ կույսերը հասան Կճավ կոչվող վայրը, որ դևերի պաշտամունքով էր լցված, ընդդիմամարտելով արգելեցին ձիերի մեջ, որ դևերը, զայրացած հարձակվելով, խեղում, այլանդակում, պնչատում էին իրենց պաշտոնյաներին: Այնտեղ առաքելանշան քահանաները, հալածելով նրանց և քանդելով նրանց պաշտամունքային շինությունները, բժշկում էին խեղյալներին, որի համար էլ տեղը Կճավ կոչվեց: Սուրբ Գայանեն այնտեղ թողեց իր խաչը որպես դևերի ախոյան, ինչպես ավազակի համար, որտեղ և հետո վանք հաստատեց սուրբ Գրիգորը:

Եվ իրենց հայտնի դարձած անվան պատճառով նրանք գաղտնի գնացին Կորդվաց [գավառի] միջով դեպի Սողոփ լեռը՝ Բերկրացվոց գավառում, որտեղ աչացավության ախտով վարակվեցին և երբ աղոթեցին, երկու աղբյուր բխեց, որոնց ջուրը ժանգ ուներ՝ կարմիր էր և սպիտակ. և մինչև այսօր

սրբուհիների անունով օգնում է աչքի ցավ ունեցողներին: Բայց այս լեռան մասին ասորիները պատմում են, թե երբ նվազեցին հեղեղների ջրերը, տապանը հասավ այն լեռան գագաթին, որը Սարարադ լեռն է, և նրանց միջով սողոցաձուկն անցնում և արգելակում է նավը. և գյուղաքաղաքի անունը Թմնիս դրվեց, այսինքն թե՝ ութ հոգի ելան տապանից:

Իսկ սուրբերն, իրենց ապահով զգալով, խրճիթներ շինեցին և բնակվեցին: Եվ այնտեղից գնացին և օթևանեցին գետի վտակների կամրջի մոտ՝ Տմորյաց կողմում, ծառավետ ընկուզուտ վայրերում: Եվ, այնտեղից տեղափոխվելով, մտնում են Հայաստան գավառը, Մշկունյաց լեռան խորին խորշի մեջ: Սրա մասին պատմվում է, թե այնտեղ մշկապորտ այծյամներ կան, ուր և, բազում հալածական բորոտներ գտնելով, ընտրյալ քահանաները նրանց բժշկում են սուրբ խաչով, ուր և Տիրոջից աղբյուր շնորհվեց նրանց. և այստեղ ծեր կանայք մնում էին մինչև իրենց մահվան օրը: Եվ, այնտեղից չվելով և կանգ առնելով Բժունյաց սահմանին, մնացին այնտեղ բազում օրեր: Եվ, այնտեղից տեղափոխվելով, բնակվեցին գետի մյուս ափի հորդաբուխ աղբյուրի մոտ՝ քաջալերվելով Սուրբ Հոգու շնորհներով. շատ օրեր անցկացրին՝ զվարճանալով տեղանքի բարեհամբավությամբ: Այնուհետև նրանց մի մասն այստեղ մնաց՝ այն վայրում, որի անունը Սուրբ Տիկին է:

Եվ այնտեղից առաջ անցան (որտեղից սկիզբ է առնում բովանդակ գետը, որտեղ որ փոքրագույն, անօգուտ ջրերը Կանգվարա լեռներից, որ Ագռավաքար է կոչվում, հոսելով և գարնանային վտակները գետանալով, գալիս են օժանդակելու մեծ գետին, որ Տիգրիս է կոչվում) և հասան մի վայր և [այնտեղ] գտան սակավաթիվ քրիստոնյաների, որոնք նշանակերտած պահում էին Տիրամոր պատկերը, որին ուրախացած երկրպագեցին և Սրբուհուն գոհություն էին հայտնում: Եվ սակավ օրեր մնացին [այնտեղ], քանզի հավատացյալները չկամեցան՝ կասկածանքներից երկվության մեջ լինելով, և նրանք

գնացին դեպի Պաղատ լեռան գլուխը, որտեղ, ասում էին, մեծ քանակությամբ դևեր կան, որ մեծարում են Արամազդի և Աստղիկի տունը: Եվ հաճախ պաշտամունքով տոն են անում, որը Պաղատն է: Եվ այնտեղից լեռան զառիվայր, արեգակնահայաց կողմի խոր ձորով մի փոքր գնացին դեպի հարավ, դեպի լեռան այն կատարը, որը վար է իջնում, աստվածների կրակի, անհագ հրի, անդադար այրման տունը. և քարեր էին հոսում հորդաբուխ աղբյուրի ակունքից, որ բխում է լեռան ստորոտում՝ բարձր ապառաժի առաջ, այն տեղում, որը կոչվում է Բութ: Քանզի քույրը կրակն էր վառում, իսկ եղբայրը՝ աղբյուրը [բխեցնում]:

Եվ քարայրում որջացած ապրում էին երկու վիշապ՝ դիվացած և սևացած, որոնց կույս աղջիկներ և անմեղ պատանիներ էին զոհաբերում: Դևերը, նրանց արյամբ զվարճացած, նաև բագիններով, հրով և աղբյուրներով զարհուրելի տեսարան և փայլատակում, թնդյուններ և դոփյուններ էին ներկայացնում: Եվ խոր ձորերի մեջ լցված էին մահաբեր թույներով լի օձեր և կարիճներ: Սուրբ կանայք այնտեղ են հասնում և, աղոթքներով ու արտասուքներով երկինք հայելով, առնում են սուրբ նշանը և պահում աղբյուրի վրա, և դևերը փախչում, մտնում են բագինը՝ վայ-վայ աղաղակելով: Եվ լեռներով մեկ ուրիշ ձայն չէր լսվում, բացի [նրանց] վայումի ճիչերից: Եվ նրանք անցնում են այն ձորի միջով, որտեղ մինչև այսօր քարացած մարմնով օձերը մնում են: Եվ բագիններից փախած դևերն ընկնում են Մարաց երկիրը: Եվ պատկերը փշրեցին սուրբ խաչի զորությամբ, որը գյուղի բնակիչները տեսնելով՝ սուրբ երանելիների միջոցով հավատացին Քրիստոսին:

Եվ, այնտեղից դուրս գալով և հյուսիսի կողմով իջնելով, եկան Կորիթ կոչվող գյուղը: Կուռքերին փշրեցին, թունավոր օձերին սպանեցին սուրբ խաչի նշանով և դևերի աղբյուրը ցամաքեցրին, որտեղ և հետո Սուրբ Գրիգորը երկու եկեղեցի շինեց և Կորիթում փայտեղեն սեղան պատրաստեց և իր գոտին ու գավազանը որպես նշան թողեց այնտեղ: Իսկ սուրբերը,

Տոսբ գավառ հասնելով, սուրբ նշանը թողնում են լեռան հարավային կողմից՝ Վանի դիմաց՝ վանքի շատ փոքր խուցեր շինելով. այնտեղ մնացին՝ սպառնացող հալածանքների կասկածի պատճառով: Եվ այնտեղ Վարագ լեռան վրա ամրացան, որովհետև լսեցին, թե որոնում են իրենց, ցանուցիր բնակվեցին լեռան խորշում՝ իրենց համար գետնափոր բնակարաններ շինելով: Այսպես սուրբ քահանաներից երկու հոգի ապրեցին նույն տեղում մինչև առ Քրիստոս իրենց կոչման և վախճանի օրը: Եվ նրանց [բնակության] տեղերը կոչվեցին Ուրբաթայրեր, քանզի ուրբաթից ուրբաթ սուրբ պատարագ էին մատուցում և արժանավորապես բաշխում Տիրոջ Մարմինը և Արյունը սուրբ կանանց:

Արդ, ո՞վ կարող է պատմել Տիրոջ զորությունների մասին՝ լսելի դարձնելու համար Նրա սքանչելիքները, Ով Իր ողորմությամբ գերազանց լույս ծագեցրեց մեզ համար արևմուտքից մինչև Հայաստան երկրի արևելքը, մանավանդ՝ կանանց միջոցով, որոնցի՛ց աշխարհ մտան մեղքերը: Ով ամենակարող է, և անհնար ոչինչ չկա Նրա համար: Արդ, Արարատյան գավառի Վաղարշապատ քաղաքում երանելիների մահվան, չարչարանքների և նահատակության մասին կիմանաս Ագաթանգեղոսի պատմություններից: Որոնց միջոցով բարձունքներից անստվեր Արեգակը ծագեց մեզ համար՝ լուսավորելով մեզ աստվածագիտության լույսով, պայծառացնելով տոնասեր և աստվածասեր հավատացյալ ժողովուրդների սրտերը, որի համար էլ Քրիստոսին վայել է փառք և զորություն և իշխանություն հավիտյանս հավիտենից. ամեն:

ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԵԻ ԵՎ ՆՐԱ ՎԿԱՅԱԿԻՑՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆԸ [ՆՎԻՐՎԱԾ] ՆԵՐԲՈՂՅԱՆ՝ ՀՐԱՇԱՋԱՐԴ ՀՈՐԻՆՎԱԾՆԵՐՈՎ[102]

Նորահրաշ և գերապայծառ է տոնն այս, և հոգևոր ցնծության ավետիսն ընդհանուր առձայնում է բոլոր հայաստանցիներիս՝ մշտահոս առաքինությամբ, լուսերանգ ծաղիկներով պսակելով աստվածասեր անձանց, որոնք ցնծում են վկաների պատվով և զվարճանում նահատակների արյամբ:

Կուսական է տոնն այս և բոցեղեն զվարթուն երկնայինների կուսական դասակցությունների լուսավոր խմբերին հորդորում է տոնակից և զվարճակից լինել, իսկ ասքանազյան ազգին՝ այսօր տեսնել սա՝ Քրիստոսի փառքի փայլմամբ պսակվելով և հրճվելով:

Մարտիրոսական է տոնն այս և ճգնավորական հանդես և վկաների բոլոր պսակակապ թագազարդված դասերին, պայծառ և մեծ սուրբ առաքյալների և մարգարեների աստվածազգյաց խմբերով հանդերձ, հրավիրում է դեպի Նոր Սիոն՝ պարակից լինելու առագաստի մանկանց, երկնավոր հարսանյաց հոգևոր երգերը երգելու՝ ի փառս անմահ Փեսայի:

Այսօր ցնծություն է երկնի և երկրի և երկնավոր շնորհների մեծ ավետիքը. պայծառ լույսով շրջափայլելով Թորգոմի տան մեջ՝ հավատացյալների հոգում երկնի ցնծությունն է շարժում: Որովհետև կենդանի Լույսը, որ փայլատակում էր երկնքից

[102] **Մովսես Խորենացի**, Աստվածաբանական երկեր, էջ 49-74:

Հռիփսիմյանների վրա, այստեղ բոցափայլեց փայլակնաբորբ ճառագայթներով. [այն] ոչնչացնում է անեծքների փուշը և վկայական արյամբ նորոգում երկնայինը, այստեղ ծաղկեցնում բանավոր բույսերի արդարության բողբոջները, սաղմոսների անուշահոտություն բուրում. այստեղ հնչում է անմահ Թագավորի փառքը:

Այսօր ցնծությունն է երկնի, որովհետև աստվածազգյաց հարսը երկրի վրա ընդունեց՝ պսակը վայելչապես դրած, լույսով և անմահությամբ զգեստավորված, և խաչազգյաց օրիորդները, նրա հետ կուսական արյամբ ծիրանավորված, երկնագումար սերովբեների անցնող խմբի հետ մտան Սրբություն Սրբոցի լուսո առագաստը՝ փեսայացած Բանի մոտ՝ Նրա աջ կողմում կանգնելու որպես սուրբ դշխո՝ ոսկեհուռ պսակված: Եվ հրեշտակների զորքերը, վկաների ծաղկաձև վարդագույն արյան անույշ հոտի փափագն ունենալով, իջնում են. և հողեղենը հրեղենին է միանում, որը հավետ հրաշացնում է վկաների հանդեսը:

Այսօր գերահրաշ և լուսապայծառ փառքով ցնծում է Հայաստանյայց Եկեղեցին կուսականների տոնով, որով Երրորդության լույսն ընդունեց [իր մեջ], մերկացավ մեղքի հնությունից, հարսնազգյաց արփիափայլ հրաշքներով, թագը գլխին հրճվում է և պարծենում իր պսակիչ Քրիստոսով՝ վկաների հանդեսը տոնելով:

Այսօր հիշատակն է Քրիստոսի սուրբ և մաքուր, անարատ հարսի [Հռիփսիմեի մասին է խոսքս] և նրա հետ՝ զգաստության աղբյուր և հավատի մայր Գայանեի, և սրբության որդիները՝ իմաստուն կույսերը՝ մշտավառ լույսով ջահազգյաց, ծագում են արևմուտքից՝ Երրորդության համապայծառ լույսը փայլեցնելով Հայաստան աշխարհում:

Եկեք այսուհետ, Քրիստոսի նո՛ր ժողովուրդներ և սրբության անթառամ ծաղիկներ, իմաստուն կույսերին այժմ բարեբանության պտուղներով հատուցենք ի պատիվ վկաների՝ այստեղ, որտեղ կուսություն և զգաստություն է պետք, կենսաբեր ողկույզ

պտղաբերելով: Եկեք փութա՛նք անմահության խորհուրդների պտուղը քաղելու և աստվածազգյաց հարության հոտը բուրելու և, այս վկաների կուսական տոնը մեծարելով, մեր աշխարհին բարի համբավը բերենք՝ ասելով.

«Ուրախացի՛ր և ցնծա՛, Հայաստա՛ն աշխարհ, նոր Իսրայել, երկիր ավետյաց և դրա՛խտ աստվածատունկ՝ զարդարված առաքյալներով և մարգարեներով և սրբերի լուսեղեն դասերով. վկաների արյամբ քո մեջ մոլորության բոցը մարեց, և, ճշմարտության ջահը վառված, բոցն է բորբոքվում, լույսը՝ անաղոտաբորբոք ճառագայթներով:

Ուրախացի՛ր և ցնծա՛ մարգարեական ավետիսներով, Սիո՛ն լեռ, հյուսիսային կո՛ղմ, մեծ թագավորի քաղա՛ք. կուսական արյամբ քո մեջ մեղքի ջրհեղեղը ցածրացավ, և ավետարանական գետերն ահա, ձայն բարձրացնելով իրենց ընթացքի մեջ, տիեզերատարած և լուսասփյուռ հրահոսան վտակները հագեցնում են քո դրախտը բանական երկնային տունկերի՝ հարազվարճ և մշտափթիթ լուսեղեն կանաչությամբ ծաղկած պտղով ունենալով էական Լույսի ճանաչողությունը:

Զվարճացի՛ր և հրճվի՛ր, նո՛ր Սիոն, արթնացրո՛ւ որդիներիդ թմբուկներով և պարերով դեպի հարսանյաց երգերը և ընդառա՛ջ գնա երկնավոր հարսին. զի գալիս է ահա սուրբ հարսը Լիբանանից՝ վայելուչ լույսով զարդարված, մարմինը արեգակով պարուրած և լուսինը ոտքերին. և, Քրիստոսի փառքի ճառագայթարձակ փայլմամբ պսակված, խանդակաթ սիրով ձայնում է Նրան. «Կհամբուրես ինձ համբույրներով Քո բերանի, զի Քո ետևից եկավ անձն իմ» [Երգ, Ա 1]: Ահա գալիս է կույս հարսը՝ հոգու թևերով սլանալով, փայլելով կուսության բազմապայծառ լույսով: Գալիս է հանդիպելու անմահ Փեսային՝ ասելով. «Թափված յուղ է Քո անունը, որի համար սիրեցին օրիորդները Քեզ» [Երգ, Ա 2]: Գալիս է՝ իր դիմաց ունենալով արդարության Արեգակին, և նրա շուրջը լուսաճաճանչ աստղերը ճառագայթելով՝ բազմագին լույսի կուտակումն արևմուտքից

սփռում-տարածում են մինչև հյուսիսի կողմերը: Գալիս է իրավունքով և արդարությամբ խոսողը՝ իր շուրջը սպասավոր ունենալով երկնային զորքերին, հրանյութերի խմբերին. և խաչազգյաց օրիորդները հրճվում են նրա հետ՝ ասելով. «Ցնծանք և ուրախանանք քեզանով, զի քոնն է ճշմարտապես ուրախանալը, որովհետև քեզ սիրեց Ողողությունը» [տե՛ս Երգ, Ա 3]: Գալիս, մտնում է ցնծությամբ արյան առագաստը՝ տեսնելով իր Տիրոջը ցնծությամբ նոր առագաստ եկած՝ Խաչի վրա զոհվելու. հրով և արյամբ հարսնանում է Նրա՛ն, Ով աստվածության հրի մեջ մաքրեց իրեն և, Իր արյամբ ծիրանաներկելով, խաչազգյաց լույսով պսակելով, հարսնացրեց Իրեն և անապական կուսությամբ ծնեց կենդանի հույսով. և Սուրբ Հոգին էր հովանավորում այդ աստվածային հարսանիքը: Այսպիսին է բազմերջանիկ և սուրբ կույս Հռիփսիմեն, և այս է նրա կուսության և փառքի սպասավորությունը:

Արդ, քանի որ ովքեր արքայական հարսանիքի և կամ հանդիսական մարտերի գովեստն են դրվատում, պաճուճաբանելով աշխարհն ու ազգը՝ դեպքերն են պանծացնում, իսկ մեր մեջ գովասանքի արժանացողը սուրբ հարսն է, հաղթող նահատակներն ու իմաստուն կույսերը, սրանց ո՛չ թե ստորին երևույթներն են պաճուճազարդ խոսքով արվեստախոսում, այլ երկնքից ի վերուստ Սուրբ Հոգին է հիացումով գովում, որոնք երկնքով մեկ փայլատակում են արեգակի փայլով: Բայց քանզի այս Սուրբ Հոգով պսակված հարսը, որպես իմ հոգու մայր, անապական կուսությամբ ծնունդ տալով ինձ և գգվելով սրբության գրկում, կուսական արյամբ աստվածագիտության կաթն արբեցնելով, հաղորդակից դարձրեց կենաց Բանին, և ծնունդից ի վեր մայրերի մոտ առանց ուսման բնավորված այն բնավորական գութը ստիպում է իմ դեռաբույս անձին սուրբ մորս և կույսի աստվածավայելուչ փառքը ներբողել՝ նրա հոգևոր ծնունդների հարախմբերի մեջ, այդ պատճառով էլ շատից քիչը սկսեցի՝ առաջնորդ ունենալով կենաց Բանը:

Սա, ինչպես հայտնի է բոլորին, հռոմեացիների գերապայծառ նահանգից էր. կայսեր ծիրանափառ օգոստականներից բուսեց որպես երկնային ծաղիկ Պողոսի և Պետրոսի հեղած առաքելական արյամբ ոռոգված անդաստանում, ծիրանազգեստ մաքրությամբ փթթելով սրբուհի Գայանեի կուսական գրկում, նրանց վկայարանում սուրբ սեղանին մերձ սնվելով՝ զարգանում էր՝ հասնելու համար առաքելական հավատքի վկայության հասակին: Նրանց իսկ փեսավերների կողմից հոր աստվածազգյաց համաձայնությամբ Բանին է ընծայվում. հրճվելով առաքելական զարդով, իրեն զգաստության կենդանությամբ պատած, պճնված բազմալույս առաքինությամբ, պսակված Երրորդության համապայծառ լույսով՝ հոգով նմանվում էր Ստեղծիչի պատկերին, անապական և անեղծ կուսությամբ առագաստված՝ սպասում էր Քրիստոսին՝ երկնքի Արքային: Ոչ միայն հոգու մաքրությամբ, կուսության բազմապայծառ ճառագայթներով էր փայլում, այլ, ամեն տեսակ ոսկուց ավելի սրբված և մաքրագույն լինելով, որպես արդարև ճշմարիտ լույսի հայելի, մարմնի գեղեցիկ ստեղծվածով արեգակնապես փայլում էր ավելի, քան կանանց ծնունդները: Մեզ հետ նաև Սուրբ Հոգին կերգի այս մասին. «Թագավորի դստեր ողջ փառքն ի ներքուստ է» [Սաղմ., ԽԴ 14]: Հարազատ գեղեցկություն շտեմարանած Քրիստոսի հարս, կենդանի լույսի պատկեր, անկողոպտելի նվեր, Աստուծո ընծայած անկոխ անդաստան, անմահության խորհրդի բուրաստան, անթառամելի կենաց ծաղիկ, հոգու սեղան, Աստուծո խնկանոց, բազմափայլ լույսի աշտանակ, կնքված աղբյուր՝ ըստ սողոմոնյան Երգի՝ պահված միայն սերովբեների Արքայի համար, Երկրորդ Ադամի՝ հրեղեն դասերով շրջափակված բանավոր դրախտ:

Այս դրախտը նախաչար օձն էր ջանում մտնել, ինչպես սկզբում՝ հակառակ առաջին ստեղծվածին: Իր լրբենի չարությունները աստվածազգյաց փառքից ջանում էր կողոպտել Բանին հարսնացած բազմերջանիկ կույսին՝ ինչպես

դավաճանող կնոջը, այդ չհագեցողը չարիքից, որը և, հրեշտակների խմբի մեջ մտնելով, Հոբին էր ցանկանում [կործանել] և, Տիրոջը տեսնելով հանցավոր մարդու կերպարանքով, մարդկության վրա ընթանալով, փորձության էր ենթարկում՝ անգիտանալով, որ կործանվելու է Աստվածությամբ: Սա, Արարիչի պատկերի կերպարանքն ընդունածին՝ Բարձրյալի զորությամբ հովանավորված կույսին, տեսնելով հանցավոր կնոջ կերպարանքով, փորձում էր թույներով մահու տալ նրան: Գեղեցկապատիր պտղի փոխարեն ոսկեկուռ ծիրանազարդ կայսերական պատվով շքեղացած՝ հռոմեացիների գոռոզը մոլեկան տոփանքով այրվում էր նրան հարսնացնելու տենչանքից, որպեսզի դրանով երանության դրախտից հանի Պողոսի կողմից միջնորդված Քրիստոսի հարսին՝ սուրբ կույսին և մաքուր աղավնուն, որը վարձ էր ստացել դրախտի վայելչությունը, արքայությունն անանց, ուրախությունն անվախճան, լույսի որդեգրության առագաստը, լույսի խորանները և հրանյութերի խմբերի ցնծության պարը և, աստվածայինի սիրով վառված, տենչում էր արդարությամբ երևալ Աստուծո փառքին, վայելչության պսակ լինել Տիրոջ և արքայության թագ՝ Աստուծո ձեռքին: Չարը նրան էր հանդգնում փորձել՝ չգիտակցելով, թե նրանով լուծարվելու էր իր գոռոզացած իշխանությունը՝ օձի նզովքներով հանդերձ. և նրա կուսության լույսի որդիները ոտնակոխ անելով փշրում են նրա չարության գլուխը՝ անխայթելի գարշապարներով երանության ճանապարհով ընթանալու համար՝ որպես դեպի լույս հրավիրվածներ և փառավորվածներ, ուստի [չարը] վերստին կործանվեց:

Արդ, չարին՝ այսքանը. իսկ կույսին ինչ. խանդաղատական ձայն էր արձակում փեսավերներին, թե՝ «Ո՞վ կարող է մեզ բաժանել Քո սիրուց» [Հռոմ., Ը 35], և թե՝ «Ահա մենք թողեցինք ամեն ինչ և եկանք Քո ետևից» [Մարկ., Ժ 28], և թե՝ «Աստուծով ապրենք և Քրիստոսի հետ խաչվենք», և թե՝ «Նրա հովանու տակ փափագելով կնստենք [տես Երգ, Բ 3], և Քո աջը թող

ընդունի մեզ հանուն կենարար Փրկչի», որովհետև ասաց. «Վեր կացեք, գնա՛նք այստեղից» [Մատթ., ԻՁ 46]: Զվարթուն սուրբ հողեղեն սերովբեն, այս ձայնից զարթնելով իմաստուն կույսերի դասերի հետ, զգաստ և մաքուր կուսության հոգևոր թևերով սլանալով, համանման այն թեթև ամպին, որին նստած Տերը Եգիպտոս էր մտնում, երկրի ծագերից բարձրանում էր այնտեղ հաստատված և երկնքով շրջափակված լեռների գլուխը. լեռներ, ուր Աստված է բնակվում, որոնք, մարգարեության համաձայն, ցնծում են Տիրոջ առաջ՝ Պողոսն ու Պետրոսը, որոնց գրկից գտնվեց այս լուսավորը:

Որոտատեսիլ ամպը Սուրբ Հոգու անձրևն է հոսեցնում և հյուսիսի կողմից՝ ցողելով Այրարատ աշխարհը՝ երկնավոր մշակներ Թադեոս և Բարդուղիմեոս սուրբ առաքյալների անդաստանը՝ զվարթացնելու նրանց քարոզության բազմածաղիկ բույսը:

Անստվեր լույսի առավոտը, բազմաստեղ լույսով ծագելով, հասավ հոգևոր աստղերի լամպարաջահ դասերին՝ ավետարանելու համար արդարության Արեգակի ծագումը բազմափայլ ճառագայթարձակ լույսով. երեք անգամ հինգ տարով երկրի ծոցում գիշերեց, որ ելնի և մշտնջենավոր ցերեկ տարածի այս աշխարհում: Բազմալույս ճառագայթը պարունակվեց, ամփոփվեց նոր աշխարհիս հնձաններում՝ կենաց Որթից մեզ համար պայծառ և կանխահաս ողկույզը պտղաբերելով, կուսության բաժակով արբեցնելու համար մեզ այն խաղողի արյունը, որը Խաչի հնձանում քամվեց և տիեզերքին անմահությամբ արբեցրեց:

Խռովվեց այն գոռոզ պագշոտյալը՝ չարի արբանյակը, Հերովդեսի նմանակը, երբ տեսավ, որ խաբվել է կույսից և, սաստիկ ցասմամբ գոռալով, իր տիեզերակալ իշխանությունն էր շարժում. և կատաղի ցասմամբ իր դառնությունը թափում էր Եկեղեցու հիմքերին՝ քանդելու, կործանելու և սրբերի արյամբ աշխարհն արբեցնելու: Արևմուտքի այդ չարը լուր էր ուղարկում

արևելք. պարթևազգիների տերությունն էր շարժում, որ որոնեն չքնաղ մարգարիտին՝ իրենց տերության հնձաններում թաքնված գանձին: Սողում, շրջում էր աշխարհում օձը սկզբնաչար, մահաշունչ թույնով էր լցնում թագավորներին և նրանց զորքերին. պտտվում, թափառում էր երկնքի տակ. չարանում էր վկաների մարտից՝ տեսնելով իր կողմից խաբված ազնվականների զորաժողով գումարելը: Երկնչում էր՝ տեսնելով իր հաղթահարվելը սուրբ կույս Մարիամից և որ նրա դուստր Հռիփսիմեով զրկվելու է բոլորի վրա ունեցած տիեզերապետությունից:

Այսպես ճշմարտության ճառագայթն էր փայլում Հայաստան աշխարհում, և ավետյաց ձայնն էր հնչում Թորգոմի տանը. քանզի շփոթված Պարթևաց տերությունը խռովվում էր՝ մեծահույզ քննությամբ որոնելու ելած բազմալույս անհայտ մարգարիտին, որ եկել էր՝ նրանց անանց մեծությամբ մեծացնելու: Եվ հոյակապ հաղթությամբ, քաջությամբ պսակվածը՝ քաջ այրերի հսկայազոր արքա սեգ Տրդատը, մոլեգնոտ տոփանքով տենչում էր իրեն սեփականացնել էական Լույսին հարսնացած Հռիփսիմե դշխոյին՝ նրան, ով պատշաճ էր իր Փեսային: Եվ պարթև զորքերը հարսանյաց փողերով ու սրինգներով շտապում էին արքայական պարով համոզել նրան, ով եկել էր՝ նրանց գրելու երկնքի Արքայի զորության զորքերի մեջ, սաղմոսների օրհնության երգով մոտեցնելու նրանց անմարմինների խմբերին: Եվ թագավորազուն օրիորդները և հայկազյաններիս կույսերը ոսկեկուռ, շքեղաշուք, երփն-երփն զարդերով, թմբուկներով և պարերով գալիս էին, որ արքունի սենյակը տանեն նրան, ով եկել էր նրանց հարսնազգեստելու Երրորդության լույսով, վերին Սիոնի դուստրերի կարգին դասելու լուսերամների դասի հետ, առագաստելու անեղաշեն հարսնարանին:

Եվ նրանք՝ սա, իսկ վկանե՛ր՝ ինչ: Զգաստության և սրբության մայրը՝ առաքելուհի Գայանեն, որ աղբյուրն էր հոգևոր շնորհների, որ կուսական ակներով մարգարիտ պսակ էր հյուսում սերովբեների Արքային, բացելով իր վկայական բերանը՝

քաղցրաձայն վարդապետությամբ հորդորում էր իր [հոգևոր] զավակին և օրիորդներին՝ Քրիստոսի մշտալույս հարսի հետ փութալ դեպի նշանակված նպատակը՝ դեպի քրիստոսադիր պսակահամբար կետը: Մեղր էր կաթեցնում իր շուրթերից Քրիստոսի քույրն ու հարսը՝ Գայանեն. մեղր ու կաթ էր իր լեզվով կաթեցնում սուրբ կույս Հռիփսիմեի լսելիքի մեջ՝ հիշեցնելով նրան քաղցր սնունդը, հայրենյաց ծիրանազարդ փառքի լքելը, Քրիստոսին հարսնանալը, Նրա մարմնավորումը հանուն մեզ, Խաչի վրա զենվելը, Նրա մյուսանգամ Գալուստը, ահեղ Ատյանը, անապական պարգևները: Կուսության հանդեսի աշխարհաժողով մարտում այսպիսի ավետարանական վարժություններով էր մարզում մեծ նահատակին ընդդեմ խրոխտ ախոյանի՝ նրան առաքյալների և մարգարեների և նրանց միջոցով էլ՝ Քրիստոսի դուստր կոչելով: Եվ նա՝ սա:

Իսկ նահատակը նահատակադիրի մոտ, աչքերը դեպի վեր՝ դեպի գերաշխարհիկ կայանները բարձրացնելով, Նրան էր օգնության կանչում. Ո՞ւմ՝ իր Տիրոջը և Աստծուն, անմահ Փեսային, Ով փրկեց Շուշանին և ապրեցրեց Թեկղին և հնոցի մեջ ցող ցանեց [տես Դան., Գ]. Նրա թևերի տակ էր տենչում հովանի գտնել, ազատվել անարժաններից: Լսեց կույսի աղոթքները Թագավորը, Ում ցանկալի էր նրա գեղեցկությունը, և երկնքի ահավոր զորությամբ Իրեն ցույց տվեց նրան, ահեղ որոտմամբ ցրեց լկտիների ահաբեկված զորքը: Բացում էր հաստատությունը. անունով էր կանչում Իր հարսին՝ Իր անճառելի փառքը ցույց տալով նրան, այն լուսո խորանը, ուր հրավիրվեց, նրա համար պատրաստված բազմապայծառ պսակը և հրեղենների խմբերը, որոնք սպասում են երկնքի դռների մոտ՝ նրան առագաստի մեջ ընդունելու համար. խոստանում էր նրա հետ լինել հավիտյան և նրանով այս աշխարհը հաշտեցնել Իր հետ և ավետարանական լույսով՝ ոլորտները հյուսիսի:

Փեսայի ձայնից զորացավ կույսը, հրապարակ ելավ ախոյանի դեմ, որը մարմնի և մեղքի գրգիռներով փոթորկվող խավարի

մեջ էր: Ելնում էր մեղքերի դեմ մարտի ճակատ՝ սպանելով մեղքը և այն գտնողին: Արդարությամբ վառված իր Հոր՝ երկնավոր նահատակի զենքերով ու զարդերով, որ նրանով առաքելական ըմբշամարտիկ դարձավ՝ սպառազինվելով հավատի զրահներով, որպես հուսո սաղավարտ դնելով Նրա հավատի վահանը, Նրա պես մեջքին սրբությամբ կամար կապած, ունենալով հոգու սուսերը՝ կուսական փողով Նրա ձայնն էր հնչեցնում ընդդեմ մեղաց մարտի, թե՝ «Ո՞վ կարող է հեռացնել ինձ Քրիստոսի սիրուց՝ սուրը, հուրը, խաչը, մարմնիս հոշոտումը, ոսկորներիս կոտորումը. այլև նույնիսկ հանդերձյալ հավիտյանները չեն կարող զատել ինձ Նրա նկատմամբ կենդանի սիրուց, Ում ես հարսնացա» [տես Հռոմ., Ը 35-39]: Կույսը հարդարում էր [կռվի] ճակատը, երբ, դահիճների կողմից ձգված, բռնությամբ փակված էր արքունի սենյակում՝ կուսության ասպարեզում: Դարձյալ վեր էր բարձրացնում աչքերը, դարձյալ՝ կուսական մաղթանքներ, դարձյալ՝ փարելի պաղատանքներ, դարձյալ՝ խանդաղատական արտասուք և աղերսալի աղոթքներ: Ո՞ւմ ուղղված. Նրան, որ ծովը ճեղքեց և սանձեց Հորդանանը, մարգարեին կորզեց կետի [որովայնից] և մահը կողոպտեց և գոռոզացած քաղդեացուն ճարակավորների խմբի մեջ արտաքսեց: Այդ զորությանն էր աղաչում կույսը հովանի լինել իրեն՝ ասելով. «Արթնացրու Քո զորությունները և արի մեզ ապրեցրու. Քո գթությունները դեպի ինձ կգան, և կապրեմ ես, որովհետև Քոնն եմ ես. ուստի ապրեցրու ինձ» [տես Սաղմ., ՀԹ 3]:

Գալիս հասնում էր մոլեգնած ընդդիմամարտը՝ կատաղի զայրացմամբ ցնորված, բորբոքված մեղքերի բոցով: Ուզում էր այրել անթառամ կուսության բոցատերև վարդը, որ կենաց ցողով էր փթթում՝ հոգու զորությունը հագած: Կույսն էլ էր հանդես մտնում: Նոր էր հանդեսն այդ՝ հրեշտակների և մարդկանց մտքից ու խոսքից վեր: Հանդես էր մտնում խաչազգյաց կույսը ծիրանազգեստ արքայի առաջ, որ հարսանյաց թագ ու զարդերով էր պճնված: Հանդես էր մտնում կույսը, որ Խաչով էր

պսակված և խաչված՝ աշխարհում, նրա առաջ, ով թագով խրոխտացած գլուխն էր բարձրացնում և որպես փեսա սրտաշարժությամբ ցնծում առագաստում: Կույսը դեմ էր դուրս գալիս հսկային, որ, զորությամբ փքված, տիեզերքն էր դղրդացնում և գոռալով խրոխտանում, թե կջնջի մարաց և պարսից զորությունը: Ճակատելու էր ելնում զգաստությամբ զինված կույսը պագշոտած ահեղ վայրագի դեմ, որն, ըստ առակավոր խոսքի, սիգալիս ավերում էր գետաթմբերը և ցամաքեցնում ծովերի հորձանքները: Բռնավորը, հանդեսների զորությամբ պերճացած, նա, ով պարսից դեմ կռվելիս ցրում էր փղերի երամակները, հունաց ըմբշամարտի հանդեսներին ցուլերի եղջյուրներն էր ձեռքով պոկում և ափերով հսկային էր պատառոտում, դեմ էր դուրս գալիս կույսին, որն ուսին Խաչ ուներ դրած և տենչում էր ծարաված սիրով խաչակից լինել կուսածին Արարչին:

Արդարև, նոր էր հանդեսը. հրեշտակների զորքերը, նրանց հետ հանդեսով սքանչացած, կուսածին Արքայի փառքն էին հիացած երգում: Սաստկանում էր հանդեսն ընդդիմամարտների, մոտենում էր պսակների [դնելու] պահը. քանզի հաղթում էր կույսը, հաղթվում էր արքան, վանում էր կինը, վանվում էր հսկան. մանուկ կույսը զգետնում էր տիեզերասաստ բռնավորին. թագը փշրված էր, արքայական արդուզարդը՝ կողոպտված, կույսի անկողոպտելի մաքրության զգեստն անապական էր մնացել. կույսի ոտքերի տակ գետնատարած ընկել էր մահաշունչ վիշապը, որը կույսի արյամբ էր կենդանակերպվելու երանության պատկերով: Քանզի կույսին հովանի էր այն բազուկը, որ Խաչի վրա բարձրացավ, որ ձգեց երկինքը և երկիրը հաստատեց, սանձեց ծովը և ամեն ինչ Իր ձեռքում ունի: Նա Իր աջով ետ էր պահում անհպելի կույսին՝ Իր կողմը ձգելով և ձախով դեպի նպատակն էր ուղղում նրան [տես Երգ Ը 3]: Եվ քանզի գիշերվա ժամին էր կատարվում հանդեսը, նաև անաստվածության խավարի մութն էր պատում նրանց, ովքեր այնտեղ էին. սակայն որպես փայլակ արեգակնապես

ցոլանում էր արքունական սենյակից, անթաց ոտքով պատռելով մեղքերի ծովը, Լիբանանի գեղեցկուհին՝ Քրիստոսի հարս անվանվածը, մաքուր այդ աղավնին՝ ձիթենու տերևը բերանում՝ հոգու ավետիս տալու Նրան, Ով անդունդի խորքերն իջավ, ինչպես Նոյը՝ ծոցը տապանի, տասնհինգ տարի տքնելով՝ մեծ ավետիքին էր սպասում մեր աշխարհի հայրը, հոգևոր լույսի ճառագայթը, Միածնի քարոզը, մեծ լուսավորիչը. հոգու թևերով թռած լուսազգյաց աղավնին ավետիսի քաղցրաբարբառ հնչումն առձայնում էր հնձանում, որտեղ տրտմազգեստ նստում էին զգաստների խմբերը:

«Զվարճացի՛ր,– ասում է,– ուրա՛խ եղիր, Գայանե՛, մա՛յր լույսի որդիների. ուրա՛խ եղիր և ցնծա՛ մարգարեական օրհնությամբ, անապա՛տ ծարավի. ահա՛ ծաղկեցիր որպես շուշան և քո գրկում բուսած իմ կուսության անթառամ վարդը փթթեցրիր ի փառս և ի զարդ Հայաստան աշխարհիս: Արդ, մա՛յր իմ, ուղարկի՛ր ինձ այն առագաստը, ուր հրավիրվեցի: Փութա՛, շտապում եմ ես, քանզի «Եղբորորդին իմ անցավ, և իմ ոգին դուրս եկավ Նրա խոսքի հետ» [Երգ, Ե 6]: Գնում եմ փնտրելու Նրան, Ով սիրում է իմ անձը. որտե՞ղ է հովվում, որտե՞ղ է հանգստանում. շուշաններ-ի մեջ, բուրաստաններում, վայրի խոտերի մեջ՝ խաղաղ ջրերի մոտ, քանզի Նրա թևերի հովանու տակ ես հանգիստ առա՝ անստվեր լույսի մեջ: Ելլ, տե՛ս նահատակ կույսիս. հանդեսն ավարտեցի, ախոյանին հաղթեցի, պատերազմը ետ մղեցի. մարտի տապից պապակած՝ ծարավում եմ. տենչում եմ հոգևոր կենաց Աղբյուրին մերձենալ, Ով Խաչի վրա՝ Գողգոթայում, ինձ համար ծարավել էր. ձայնում է ինձ, որ խաչակցեմ Իրեն: Ելլ, տե՛ս ինձ՝ իմ մաքուր կուսությամբ Խաչի վրա Նրան փարած, իմ արյունաներկ շրթունքներով, աստվածային ըմպելիքի աղբյուրն ինձ մոտեցնելով, որին Նա ծարավեց, ջրի աղբյուր հանեց՝ կողից բխեցնելով, որից ինձ ծնեց հարսը, որը և ես ըմպելով՝ կդառնամ կենդանի ջրի աղբյուր, որ հոսում է դեպի հավիտենական կյանք:

Եվ ձեզ ավետիք, Սիոնի երկնամի՛ լուսերամներ և իմաստո՛ւն կույսեր, ելեք և տեսեք ձեր դշխոյին՝ Հռիփսիմեին, այն պսակով, որով պսակեց նրան իր Տերը նրա հարսնության օրը [Տես Երգ, Գ 11]. փութացեք և ելեք. ես ձայն եմ տալիս. «Եղբորորդին իմ խնկի պարտեզ իջավ՝ զմուռս քաղելու» [Տես Երգ, Զ 1]: Գնում եմ նրա հետ դեպի զմուռսի լեռը՝ Նրա մահվան վայրը, որովհետև ձեր ամպերով Նրա հետ ելա դեպի կնդրուկի բլուրը՝ Աստվածության լույսի վայրը [տես Երգ, Դ 6]: Թողեք ձեր հնձանները, սլացեք հոգու թևերով, մաքո՛ւր աղավնիներ և իմ հարսանիքի՛ օրիորդներ. իմ հարսնության վարդագույն զարդարանքով զարդարվեցի: Ընդառա՛ջ ելեք իմ արյունաներկ, կամարազգեստ Փեսային, որպեսզի դուք էլ ինձ հետ փայլեք Նրա արքունական ծիրանիներով՝ ի փառս և ի զարդ հրեշտակների և մարդկանց:

Ավետյաց ձա՛յն հնչեցրեք արևմուտքում, փո՛ղ հարեք Հռոմում: Զվարճացի՛ր և ուրա՛խ եղիր, տիեզերակա՛ն մայրաքաղաք, որ նստած ես արևմուտքում՝ առաքելաջահ լույսով պսակված, աշխարհատարած ճառագայթներով. քո ծիրանազգեստ դուստրերը ճառագայթելով փայլում են արևելքում, երբ հանդիպում են Նրան, որ արևելքից է ծագում, լինելով նոր Սիոնի դուստրեր և օրիորդներ և պարողներ լուսո հարսանիքի: Ուրա՛խ եղիր և ցնծա՛, հռոմեացվոց Եկեղեցի, Հռիփսիմեի մա՛յր և հա՛րս անմահ Փեսայի, հա՛րս առաքելական, որ Ավետարանի թևերը քեզնից սլացան դեպի արևելք: Այսօր խաչված Տիրոջ հետ առագաստ է մտնում՝ բաժակի արյամբ ծիրանազգեստված և պսակված, անապական կուսությամբ ծնելով լուսո Հոր արևելքի որդիներին:

Եվ ձեզ ավետիք, Քրիստոսի՛ առաքյալներ և ի՛մ փեսավերներ. ահա՛ առագաստ եմ գնում ես՝ ձեր կողմից հրավիրվածս: Ուրա՛խ եղեք, զի սիրեցի Տիրոջը, ինչպես որ ձեր կողմից պատվիրվեց. ձեր բարիքներով մարտ մղեցի, հավատը պահեցի, ընթացքը կատարեցի, խաչվեցի աշխարհում, մերկացա հին մարդուց, երկրավոր անդամները մեռցրի, սպանեցի ախտերը, դատապարտեցի մեղքը, հանգցրի նրա ցանկության բոցը,

հաղթեցի հեշտություններին, խայտառակեցի օձին, չեզոքացրի նրա թույները, ընդոտնեցի մահը և, իմ Խաչն առած, գնում եմ Խաչվածի հետ դեպի Նրա չարչարանքների առագաստը: Եկեք, ցնծացեք իմ նոր հարսանիքին. իմ Փեսայի վարդագույն արյունը և [Աստվածության] հուրը հեղված են որպես զարդ՝ Խաչի վրա. Նրա հետ եմ թագ առնում, Ում ինձ հարս տվեցիք:

Երկնավոր ավետյաց ձայն հնչեց քո մեջ, Հայաստա՛ն աշխարհ՝ հանդեսի ասպարե՛զ և իմ արյան հոսանքների առագա՛ստ: Ուրախացի՛ր և ցնծա՛, զի մեծացրեց Տերը՝ քեզ մոտ ուղարկելով. ահա ցող եմ ցողում քեզ վրա՝ քաղցրության ցող՝ իմ արյան կուսական շիթերը՝ դալարեցնելու համար քո վայրերը աստվածագիտությամբ, շուշանազարդելով քո հովիտները մարգարեների ծաղիկներով՝ քո մեջ առաքելական բուրաստանը փթթեցնելու համար, մշակելու քեզ որպես իմ Փեսայի դրախտը. որպեսզի «իջնի իմ Եղբորորդին Իր պարտեզը և ուտի իր ծառերի պտուղները» [տես Երգ, Ե 1]: Բերկրի՛ր, Այրարա՛տ, աստվածապարգև ավետիսներովս. ահա՛ բարձրանում եմ քո Գողգոթան՝ Արարչի չարչարանքների բաժակն ըմպելու իմ կուսության բաժակով, քեզ՝ ծարավիդ արբեցնելու կենարար արյան բաժակը՝ անմահության և լույսի:

Եվ քե՛զ ավետիք, երկնավո՛ր նահատակ և փրկությա՛ն քարոզ, բազմափայլ ճառագայթ, որ փակված ես գբի մեջ. ահա՛ քեզ օգնության եմ հասնում՝ արևմուտքից արևելք սլանալով իմ կուսության թեթևընթաց ամպով. եկա՝ իմ հայրերի՝ Պետրոսի և Պողոսի Ավետարանի տիեզերածավալ լույսի փայլակնաբորբոք ճառագայթը ծագեցնելու քո վայրերում, վանելու, փարատելու խավարի մեգը, որ արգելելով փակել է քո՝ կենդանի լույսիդ ճառագայթը: Ծագի՛ր, մե՛ծ լուսավոր, խոր անդունդներից քաղցրանվագ քո լույսով՝ քո սուրբ հայրերի՝ Թադեոսի և Բարդուղիմեոսի Աւետարանի լույսով փթթեցնելու հյուսիսի աշխարհարձակ ճառագայթալույս փայլումը: Քո վրանը խփի՛ր արևի դիմաց [տես Սաղմ., ԺԸ 6] և ելի՛ր, արդարությա՛ն Արեգակ, ցնծությամբ

ողջույնի ընթանալու արյունազգեստ հարսին, որը, մարտիրոսական արյամբ ճգնելով, եկել է քո խորանի՝ անմահ Փեսայի հարսնարանը: Եկ, հանդիպեցրու թաքնված ողորմությունդ իմ ճշմարտությանը. քանզի իմ և քո խաղաղությունը մեր հայրերի համբույրով ողջույն և խաղաղություն է լցնում այս աշխարհում: Ահա բացեցի երկինքը, Սուրբ Հոգու որոտումը հնչեցրի քո դաշտում՝ քաղցրության ցող ցողելու հովիտներում, արյամբ ոռոգելու և զվարթացնելու քո բույսերի արդյունք արդարության ցողը, վաստակած երկրագործ: Ահա խլեցի քո անդաստանից անեծքի փուշը, մեղքի տատասկն իմ կուսական հանդեսով: Եկ, սերմանիր, քաջ սերմնացան, Լույսի ավետարանի սերմերը, որպեսզի հնձի հասնելու ժամանակ ցնծանք միասին: Ահա իմ՝ քո արյանը խառնված վտակները հանգցնում են խավարի բոցը, վառելով բորբոքում աստվածային Լույսի հուրը՝ սրբելու քո արյամբ ներկված անդաստանները: Եկ, տնկիր, քրտնաթոր մշակ, կենաց որթը, ծաղկած ողկույզը՝ Հոր կողմից մշակված խաղողի արյունը՝ քո սուրբ աջով վկայված. հուրախություն վերինների և ներքինների պատվիր իմ հարսանյաց տաճարում: Ահա ճմլվում եմ քո հնձաններում. իմ կուսության բաժակով, անմահության հոսանքներով արբեցրու քո ծարված ժողովրդին, հրով և սրով կոտորվածներիս՝ մեր վարդապետության ծաղիկներին. և քո նոր ժողովրդին բոլորյալ պսակ հավաքիր, որպեսզի սրանով մտնեն մեզ մոտ՝ լուսո հարկերը:

Ցնծա՛ և ուրախացիր և դու՝ վերի՛ն Սիոն, կենդանյա՛ց քաղաք և իմ սրբության առագաստ, դու՝ ազատդ և մայրը հայր Պողոսի և Լույսի բոլոր որդիների: Բա՛ց քո դռները և ընդունի՛ր Բանի մոտ հրավիրված, Նրա ծիրանին հագած և Նրա Խաչով պսակված հարսին. գալիս, առագաստ է մտնում, և կույսերը՝ նրա հետ: Բարձրացրու՛ քո աչքերը, Սիո՛ն, և տե՛ս ամպի նման սավառնող, արյան գույնով պճնված քո դուստրերին՝ Հռիփսիմեի՝ Թագավորի դստեր հետ, որին Բանը կանչում է դեպի սենյակը Թագավորի: Եվ Դո՛ւք՝ հրեշտակների՛ զորքեր, որ հանդիսակիցն եք

իմ կուսության մարտի ցնծությանը, ելե՛ք՝ ժողովելու հոգնած հոգիներին, որ հրո և արյան մարտի մեջ են սպասում, [քանզի] շտապում ենք հասնել կենդանի Աղբյուրին:

Ցնծության ավետի՛ք քեզ, Լուսո Մայր Մարիա՛մ, աղբի՛ւր մաքրության. քո լույսով ես մերկացա անեծքից՝ ինձ վրա գցելով քո սրբության լույսի ճառագայթը. գալիս եմ հարսնանալու քո Որդուն և Նրա արյան վարդագույնն ունեմ որպես պսակ: Ցնծությամբ ընդունի՛ր ինձ՝ քո լուսո հարկում հանգստանալու համար, որովհետև հրո և արյան մարտով հանգցրի մեղքի բոցը և, իմ կուսության վարդն անթառամ պահելով, ծաղկեցրի տիեզերքն իմ արյան ցողով՝ տենչմամբ փափագելով քեզ ի ողջույն, Լուսո՛ Մայր: Մտցրու՛ առագաստ՝ Սրբություն Սրբոցը, Թագավորի մոտ, Որն իմ գեղեցկության ցանկությունն ունեցավ, որպեսզի ես էլ հագենամ Նրա լույսի փառքից»:

Այս խոսքը, կույսից միաձայն հնչելով, երկնավոր ցնծությամբ մաքրեց օդերը, երկիրը երկինք երևացրեց, դրախտը բացեց, նրա ծաղիկների անմահության հոտը բուրեց երկրում. երկնակամարը պատռեց և հողեղեններին մոտեցրեց հրաբուն դասերին:

Լսեց կույսի ավետիսը կուսածին լույսից վանված խավարասեր վիշապը մահաշունչ և տագնապեց. քանզի այն զենքով, որով մահու թույնը սկզբում առաջին կույսի բնությանը խառնեց, նույն զենքով իրեն հերձված էր տեսնում և մեղքի թույնը՝ սպանված՝ վկայվելով այս կույսով, որ Մարիամի լույսի կերպարանքով էր նկարված. քանզի չարն իրեն լուծարված և պարտված տեսավ, շտապում էր հագեցնել իր ծարավը սրբերի արյամբ: Եվ ինչ էր գործում. եբրայեցիների պես լկտիների մոլեգնած խմբերին՝ արյամբ կատաղած, զայրացմամբ մութ գիշերով սուսերներով և ջահերով մղում էր Քրիստոսի հարսի ետևից, որը դիմելով գնում էր դեպի ասպարեզ, դեպի մահ, ինչպես ոչխարը՝ մորթվելու, և դարձյալ կատարվում էր գրվածը. «Խռովեցին հեթանոսները, թագավորներն ու զորքերը հավաքվեցին միասին Տիրոջ և Նրա Օծյալի համար» [տե՛ս Սաղմ., Բ 1-2]:

Հարսը Աւետարանի հետ վկայելիս, իմանալով Փեսայի ծագումը, գիշերով զինավառում էր կույսերին: Բարձրանում էր կառափման վայրը՝ արյան ողջույն և սիրո համբույր տալու Նրան, Ում սիրեց և, մաքրության կույսի կերպարանքով սլանալով նախատեսված վայրը և նայելով Փեսայի ճառագայթին, խանդաղակաթ սիրով բաղձում էր Նրա լույսին միանալ: «Տեր,– ասում է,– ընդունի՛ր ոգիս, որ սիրեց Քեզ և անձը դրեց Քեզ համար. արդարև սիրեցի Քեզ ողջ սրտով և Քո սիրով կենդանագրեցի իմ մեջ Քո անհպելի գեղեցկությունը. սիրո վայելչությամբ վառված՝ հրով այրեցի մեղքերը և օձի թույները սպանեցի, և իմ կուսության սրբության սիրո աղբյուրը կնքեցի, Քո արյան լույսի շիթերն ըմպեցի իմ արյան բաժակով. արբեցրու՛ ինձ կենարար աջովդ, որը, Խաչի վրա տարածվելով, գրկեց ինձ, զի և ես ուրախությամբ լցված լինեմ»:

Այսպիսի խանդաղատական մաղթանքներով էր կույսն աղաչում Փեսային և, ընծայելով իրեն, խոնարհեցնում էր գլուխը դեպի պսակը. քանզի հասավ այնուհետև խավարազգյաց վանիչը՝ իր հետ առած պարթևազն իշխաններին ու զորքին՝ հրաբորբոք ջահերով՝ խամրեցնելու, այրելու կուսության անթառամ վարդը, որ հրի լուսեղեն կանաչությամբ էր ծաղկել: Չգիտեր չարը, որ իր մոլորության բոցը նրա այրմամբ էր շիջանվելու, և պարթևները նրա արյան ցողով ծաղկելու էին Աստվածության գավիթներում. այլ մոլեգնած, ըստ իր բնական չարության, ինչպես մի ժամանակ խաչողներին էր փութացնում դեպի տերունական մահը՝ զինվորներին կատակներ էր հուշում՝ հանդերձներից մերկանալը, կարմիր քղամիդը, եղեգնը, փշե պսակը. չգիտակցելով՝ հակառակ իրեն էր դրանք հնարում. քանզի Տերը դրանցով մեզ փրկեց, իսկ նրան ընկճելով կործանում էր: Վասնզի կողոպտում էր՝ մեզանից վերցրած մեղքի ծածկույթ հանդերձներից մերկանալով և նրան բռնազդեցիկ փառքից մերկացնելով. և արյունների շաղախման անօրեն անեծքները բարձրացրեց կարմիր քղամիդի վրա՝ Իր Աստվածության ծիրանին հագցնելով

մեզ: Նրան պարտավորելով՝ անմահ սպանման էր մատնում և պարտավորության հանցանքների գիրը ջնջեց եղեգնով՝ մեզ գրելով կենաց որդեգրության: Նրան դատապարտելով արտաքսում էր դեպի տարտարոսազեն խավարը. և փշերի անեծքը ջնջում էր պսակով՝ մեզ պսակելով Երրորդության լույսով: Նրան նզովքներով, որպես փուշ, տալիս էր այրվելու մշտնջենավառ հրի մեջ՝ ըստ գրվածի, թե՝ «Մեղավորներն այրվելու են փշերի պես» [տես Եսայի, ԼԳ 12]: Այսպես և սրբերին հակառակ էր գործում իր չարությամբ, քանզի նրա կողմից հրապուրված թագավորի իշխաններն ու զորքը դառը և անողորմ տանջանքների էին ենթարկում մարմինը. և սա մեզ համար կենաց առիթ էր լինում, իսկ չարի համար՝ մահվան: Քանզի Բանին միացած մաքուրը, կապված լինելով, մեզ ազատում էր բազմաստվածության կապանքներից՝ կապելով չարի իշխանությունը: Մերկացնում էր սրբությամբ առագաստյալ լուսազգյաց մարմինը և, մեզ զգեստավորելով Ավազանի լույսի սրբությամբ, մերկացնում էր չարի կարծեցյալ փառքը: Այրվում, տապակվում էր մարմինը հրաբորբոք կանթեղներից՝ կենդանախարուկվելով աստվածային լույսի հրով, և հրդեհվելով կիզում էր չարի մոլորությունը՝ մեր մեջ բորբոքելով հոգևոր հրի բոցը, որ գցեց երկիր: Սրով հերձվում էր մաքրազգյաց կուսական որովայնը. և, Սուրբ Հոգով հղանալով կենաց խոսքը, հոգևոր երկունքով մեզ ծնունդ տալով Լուսո Հոր որդեգրության մեջ, ջնջում էր օձի բազմածնունդ չարությունը: Հատում էր երկնավետյաց քարոզ լեզուն և լռեցնում կռապաշտության հնչմունքը՝ հոգևոր երգերի օրհնությունների քաղցրությանը մեզ հորդորելով: Փորվելով հանգչում էին սուրբ վկայի՝ լույսով վայելչացած աչքերը, և մարելով խավարեցնում էր մոլորության կայծակը՝ ծագեցնելով մեզ Երրորդության ճառագայթները: Կոտորում, հոշում էր կենդանի մարմնի բովանդակ անդամները և սպանում էր մեղքի անդամները, որպեսզի մեզ դարձնի արդարության անդամներ՝ իրենով միացնելով գլուխ Քրիստոսին՝ Աստուծո աճմամբ աճելու:

Սա է Քրիստոսի սուրբ և անարատ հարսի հանդեսը, որը սպանեց մեղքերը և, իր արյամբ ջրելով օձի թույները, մեղքի ծառայությունից գնաց անդատապարտելի ազատության՝ դեպի Լուսո Հոր որդեգրությունը: Եվ նրա հետ եղած սրբության օրիորդները նույն այդ հանդեսով՝ արյամբ պսակված, մահը ոտնակոխ արած և օձի գլուխը փշրած, խաչազգյաց մշտավառ լույսով նրա ետևից ելան երկնի Արքայի լուսո առագաստը: Եվ կատարվեց գիրը, որն ասում է, թե՝ «Թագավորի մոտ են տարվելու կույսերը նրա ետևից, և նրա ընկերները տարվելու են Նրա մոտ» [Սաղմ., ԽԴ 15]: Իսկ մատնիչը ամաչելով հեռացավ. սրբերի դեմ չարությամբ [դավեր] էր նյութում և տագնապով շտապում դեպի հրավիրող խավարը:

Իսկ նա, ով Լույսի կողմից հրավիրվեց՝ աստվածազգյաց հարսը, ընկճելով չարի խոհերը, հանգցրեց մահու խայթոցը. և, էական Լույսի նկարագրին կենդանակերպվելով, վեր բարձրացավ որպես փայլակ, լուսավառ լամպարաջահ վարքով իմաստուն կույսերի հետ՝ ճառագայթելով վերին խորանում: Այնտեղ էր տեսնում ավետյաց երկիրը, կենդանյաց աշխարհը, սրբության լեռը, լուսո օթևանները, երկնային տունկերի ծաղկած բուրաստանները, անդրանիկների հավաքները, հրանյութերի խմբերին, լույսի մեջ թագավորածների հրապարակները, հրանյութերի հույլերը, սերովբեների բանակները և, նայելով նրանց ծարավի սիրով, հարցնում էր. «Տեսե՞լ եք իմ հոգու Սիրելիին» [Երգ, Գ 3]:

Որից հիացան վերին զորքերը՝ տեսնելով Արարչի պատկերով կենդանակերպված հողին, որն, անցնելով իշխանությունների վրայով, խնդրում էր մտնել ներքին կողմը՝ անմերձենալի Լույսի մոտ: Ձայնելով գոչում էին վերիններն իրար. «Ո՞վ էր սա, որ ելնում է անապատից [Երգ, Գ 6], գալիս է սպիտակացած, հենված՝ իր Եղբորորդուն [Երգ, Ը 5], զարդարված է արյան գույնով. կարմիր վարդերից պսակ ունենալով՝ ձայնում էր՝ ասելով. «Թող համբուրի ինձ Իր բերանի համբույրներով» [Երգ, Ա 1]: Եվ

կամ ովքեր են սրանք, որ սրա հետ, թռչող ամպերի և երամացած աղավնիների նման, դեպի մեզ են գալիս»:

Եվ լսում էին Տիրոջը, Որն ասում էր. «Սրանք հուսացել են Ինձ, և Ես կտանեմ նրանց դեպի Իմ սրբության լեռը և կուրախացնեմ Իմ փառքի խորանում»: Կանչում էր և հարսին. «Կգաս և կհանգչես Իմ թևերի հովանու ներքո, քո՛ւյր Իմ հարս, քանզի գեղեցիկ ես բոլորովին, և չկա որևէ արատ քեզ վրա [Երգ, Դ 7], դի՛ր ինձ իբրև կնիք քո սրտին և իբրև մատանի՝ քո բազկին» [Երգ, Ը 6]: Ձայնում էր և օրիորդներին. «Եկեք Ինձ մոտ, վաստակածնե՛ր և հոգնածնե՛ր, կանա՛յք, որ դիմելով գալիս եք հանդեսից, և Ես կընդունեմ ձեզ [տե՛ս Մատթ., ԺԱ 28]. և կլինեք դուք իմ ուստրերի և դուստրերի մեջ, և Ես ձեզ Աստված կլինեմ [տե՛ս Եզեկ., ԺԴ 11, ԼԷ 23]. որպեսզի ուրախությունն Իմ ձեր մեջ լինի, և ձեր ուրախությունը կատարյալ լինի» [Հովհ., ԺԵ 11]:

Ցնծության ձայնից լցվում էր վերին Սիոնը, զվարթունների և կույսերի միասին երամացած խմբերը հարսանյաց երգեր էին երգում՝ ուղղված Փեսային. «Ահա՛ դշխոն Քո աջ կողմում՝ զարդարված և պաճուճված ոսկեհուռ հանդերձներով», և հարսին. «Սա է քո Տերը, պիտի երկրպագես Սրան [տե՛ս Սաղմ., ԽԴ 12]. վասնզի, տեսնելով գեղեցկությունը քո, սիրեց քեզ. և կլինես դու վայելչության պսակ Տիրոջ ձեռքին և թագ արքայության՝ քո Աստուծո ձեռքին»:

Բացում էր այնուհետև առագաստը, մտնում էր Սրբություն Սրբոցը՝ փեսայացած Բանի մոտ: «Տարավ ինձ Արքան Իր սենյակը [Երգ, Ա 3], և հպվեցի անմերձենալի Լույսին և Նրան միավորված ճառագայթ [եղա],– ասում էր:– Ահա գտա իմ հոգու Սիրելիին, բռնեցի նրան և չեմ թողնելու [Երգ, Գ 4], այլ նստելու եմ Նրա հովանու ներքո [Երգ, Բ 3]» և բարձունքներից միացած Սրա դարձին՝ հագած Նրա զորությունը: Կույսը, բարձունքներից նայելով, ստորինների մեջ հովիտներն էր նկատում, ուր իր արյան վտակներն էին, որովհետև կռապաշտությունների քարացած սառնամանիքն անշարժ էր մնում քաջ պտուղների մոտ: Այդ

պատճառով էլ հոգու իշխանությամբ հրամայում էր զորության ձայնով՝ ասելով. «Վեր կաց, գնա՛, հյուսիսայի՛ն քամի, և ե՛կ, հարավայի՛ն քամի, փչիր իմ պարտեզի մեջ, և թող բուրեն իմ խունկերը» [Երգ, Դ 16]: Եվ հրամայածն անմիջապես կատարվում էր:

Քանզի խորքերից ծագեց արդարության արեգակը՝ սուրբ Լուսավորիչը. Աւետարանի լույսի ջերմ ճառագայթը վառելով՝ բորբոքում էր հյուսիսի պաղությունները, լուծարում ամբարշտության ձմեռը, հակառակ հողմերով հանդարտեցնում էր նաև մեղքերի փրփրատեսակ ալիքների լեռնացայտ կուտակները. իսկ օդը սառեցնողը, որը հոգով եռալն արգելում էր, որը մահաթույն վիշապն էր փչում, ավելի քան հյուսիսայինը գումարում էր անգիտության խավարը՝ մեգով հանդերձ: Իսկ քաղցրուսույց Բանի հարավայինը ծավալելով Սուրբ Հոգու տեղացած անձրևի մեջ՝ ծաղկեցնում է աստվածագիտության բողբոջներով Հայաստանը՝ քաղցր պտղով վայելչացածներիս, որպեսզի դառնանք արդարության դրախտ խունկերի՝ հոգևոր տունկերի անուշահոտությունը բուրելու համար ի փառս Աստուծո: Եվ լրացնում է կուսական մաղթանքը, թե՝ «Թող իջնի իմ Եղբորորդին Իր պարտեզը և ուտի Իր ծառերի պտուղները» [Երգ, Ե 1]: Քանզի հոգևոր հարսանյաց խորհուրդը կատարման հասնելով և փրկության երկունքի ժամը հասնելով՝ Սուրբ Հոգին կույսի որդիների մեջ մի վայրկյանում ծնում էր ողջ Պարթևաց տերությունը. և իրականանում էր գիրը. «Երկնեց Սիոնը, և ծնվեց ողջ մի ազգ» [Եսայի, ԿԶ 8]. ինչպես հայտնում էին արքունի բյուր բանակները, որոնք, Հոգուց ծնվելով, մի ժամում Եփրատի մեջ որդեգրության ավետիսը ստացան՝ ի վերուստ շողալով լույսի ծագմամբ:

Նաև մոլեգնած բռնավորը, որ փափագում էր կույսին իրեն սեփականացնել, Քրիստոսի կողմից յուրացվեց. և, իր մեջ ախտերի բոցը հանգցնելով, ճշմարտության հրով վառված, կույսին որդի գրվեց և, Բանի քարոզը լինելով, հայրենի տերությունը լցնում էր Ավետարանի լույսով: Եվ ոչ միայն՝ այս, այլև՝ Աստվածության գանձերը՝ սրբի կուսական մարմնի ծաղիկները, որը

սպանել էր, ժողովելով ամփոփում էր որպես գանձ իր համար, որպես հավիտենական մեծություն: Եվ իր զորության քաջության քրտինքը սուրբերի վկայարանում է թողնում հավիտենապես և իրեն բարության օրինակ հարդարում բոլորի համար, առաքելաջան հանդեսով լուսավորում արևելքը Երրորդության լույսով:

Նաև արևմուտքում էր շիջանում մոլորության բոցը վկաների արյամբ՝ Ավետարանի ճառագայթը լույսի հետ շրջափայլելով ամենուր: Քանզի Աստուծո այն ատելին և ցանկասերը և գարշելին՝ Դիոկղետիանոսը, որը, Սուրբ Հռիփսիմեից իր կրած անարգանքների պատճառով չարացած, ոգորում էր տիեզերքում՝ լռեցնելու ճշմարտության կրոնը, հանկարծակի հանգչելով՝ մեջտեղից ջնջվեց-վերացավ՝ իր համախոհ օձի ծնունդներով հանդերձ: Նույն սուրբ կույսի տանից ծագեց փրկության եղջյուրը՝ ի Տեր հուսացյալ թագավորը, սուրբ և հաղթող Կոստանդիանոս կայսրը: Եվ, գործակից լինելով մեր Տրդատ արքային, առհասարակ ջնջեցին բազմաստվածության վրդովմունքները՝ խաղաղություն հաստատելով ողջ աշխարհում. և, Ավետարանի լույսն առաքելաբար իրենց մեջ ընդունելով, տիեզերասաստ զորությամբ երկնքի տակիններին նվաճեցին ի հնազանդություն վերին թագավորությանը: Եվ լրացավ գիրը, որ ասում է. «Խոստովանելու են Քեզ երկրի թագավորները» [Սաղմ., ՃԼԷ 4], և թե՝ «Երկրի՛ թագավորություններ, օրհնեցե՛ք Տիրոջը» [Սաղմ., ԿԷ 33]:

Այսպիսով կատարվեց բոլորիս ուղղված՝ սուրբ կույս Հռիփսիմեի բազմերանյան վայելչության ավետիքը, ինչպես որ հայտնի է բոլորին: Այսօր այս տոնի խորհուրդը մեզ հոգևոր օրհնությունների քաղցրաձայնությանը հորդորեց. ա՛յս է կուսական վկաների հանդեսը: Սրա՛նք են, որ, մեր աշխարհին որպես լուսավորներ փայլելով, Աստվածության հնչյուններով լցրին բոլորիս, որոնք մեր երկրում ծաղկած Աստվածության գանձերն են, լուսավոր աստղեր, Եկեղեցու ծաղիկներ, ճանապարհներ մեզ համար և կենաց դուռ դեպի երկինք, բանավոր ողջակեզներ, կատարյալ զենումներ, ընդունելի պատարագներ,

ճշմարտության քարոզներ, ստության արձանացուցիչներ, մոլության լուծում, չարության հալածիչներ, աշխարհի մաքրության համար մեղքերի ջրհեղեղ, մարդկային ազգի պարծանքներ, մեզ՝ հույս հանդերձյալ կյանքում՝ ի Քրիստոս Հիսուս: Սրանց նախանձավոր լինենք բոլորս՝ նմանապես սիրելու Քրիստոսին, որպեսզի ընդունենք ողորմությունը և շնորհներ գտնենք պետք եղած ժամանակ՝ սրանց օգնականությամբ:

Սրանք իմ խոսքերից քեզ պտուղ, ո՛վ երջանիկդ կանանց մեջ, հաղթո՛ղ նահատակ և սո՛ւրբ հարս, դո՛ւ՝ ոչ թե ղոմբիական մարտերի հաղթանակի ձիթենու պսակ և ոչ էլ՝ ոսկեկուռ ակներով փայլող թագ՝ զարդարելու արքայական հարսանիքը, այլ՝ մաքուր ընտանեգույն ընծա Բանը սիրողներին և իմաստության ծաղիկ ի Քրիստոս. արյամբ ոռոգված բուրաստան, որ, որպես զարդ քո հարսնությանը, համահավաքվել ես այն ծաղիկներով, որոնցով պսակվում ես. քրտինքի առաջին կաթիլներն իմ նորաբույս հոգու, որ սիրում է քեզ, իսկապես սիրեցյա՛լդ բարու, ընդունի՛ր գթությամբ որպես արդարև գորովագութ մայր, և դեպի ի՛նձ դարձրու Սիրողի՝ քեզ փեսայացած Բանի գթությունը, որպեսզի ես ցնծամ քեզ հետ, երբ Նրա լույսի փառքը երևա: Եվ մեզ բոլորիս, ում քո արյամբ ծնեցիր Բանին որդեգրելու համար, մշտահայց աղոթքներով Նրա՛ն հանձնիր, ծածկվածդ Նրա թևերի հովանու տակ: Որպեսզի Աւետարանի լույսով առաջնորդվածներս, այս հավիտյանի անգոների միջով անցնելով, հանդերձյալին ժամանենք՝ հասնելու Կյանքին՝ նույն Ինքն Հիսուս Քրիստոսին՝ մեր Տիրոջը: Որի հետ և Հորը, միանգամայն և Սուրբ Հոգուն վայել է փառք, իշխանություն և պատիվ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սկզբնաղբյուրներ

1. **Ագաթանգեղոս,** Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները **Արամ Տեր-Ղևոնդյանի,** Երևան, ԵՊՀ հրատ., 1983:
2. **Առաքել Դավրիժեցի**, Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ **Վարագ Առաքելյանի,** Երևան, «Սովետական գրող», 1988:
3. Գիրք թղթոց, երկրորդ հրատարակչութիւն, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1994:
4. **Զաքարիա Քանաքեռցի**, Պատմագրություն, թարգմանությունը և ծանոթագրությունները **Վարագ Առաքելյանի,** Երևան, «Հայաստան» հրատ., 2013:
5. **Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,** Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները **Գ. Բ. Թոսունյանի,** Երևան, ԵՊՀ հրատ., 1996:
6. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե., կազմեց՝ **Օ. Եգանեան**, Երևան, «Նաիրի» հրատ., 2009:
7. **Մխիթարայ Այրիվանեցւոյ** Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց **Մկրտիչ Էմին,** Մոսկվա, 1860:
8. **Մովսես Խորենացի,** Աստվածաբանական երկեր, թարգմ. գրաբարից՝ Գ. Գասպարյանի, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 2007:
9. **Սեբեոս**, Պատմություն, արևելահայերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ **Գ. Խաչատրյանի և Վ. Եղիազարյանի,** Երևան, «Զանգակ-97», 2005:
10. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա., կազմեցին՝ **Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան,** Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1965:
11. ՄՄ Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 19:

Ուսումնասիրություններ

12. **Աբրահամյան Ա. Գ.**, Հայոց գիր և գրչություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1973:

13. **Ալիշան Ղ.**, Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, Ս. Ղազար, 1890:

14. **Բասմաջեան Կ.**, Մեր հնութիւնները, «Բանասէր», Փարիզ, 1901, Հմր 1-4, էջ 130-133:

15. **Բարխուդարյան Ս.**, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1963:

16. **Գալուստեան Շնորհք արք.**, Հայազգի սուրբեր, երրորդ հրատարակութիւն, Երևան, «Գանձասար», 1997:

17. **Գրիգորյան Գր.**, Հայկական վիմագրություն, Երևան, «Զանգակ-97», 2000:

18. **Երեմյան Ա.**, Հռիփսիմե, «Գիտություն և տեխնիկա», 1967, Հմր 1 (41), էջ 10-17:

19. **Թորոսյան Ռ.**, Հռիփսիմեի տաճարի շրջակայքի նորահայտ հուշարձանները, Հանրապետական չորրորդ գիտական կոնֆերանս, զեկուցումների թեզեր, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, էջ 45-46:

20. Խորհրդային Հայաստանի պատմական հուշարձանները, Վաղարշապատի շրջան (ուղեցույց-ալբոմ), կազմեց՝ **Կ. Ղաֆադարյան**, Երևան, 1938:

21. **Ծոցիկյան Ս.**, Արարատ-Կովկաս, հ. Ա., Ֆրեզնո, Կալիֆոռնիա, 1917:

22. **Հակոբյան Գ.**, Կոմիտաս կաթողիկոսի «Անձինք նուիրեալք» շարականը, «Էջմիածին», 1976, Ա., էջ 25-30:

23. **Հակոբյան Հր.**, Նորահայտ նյութեր Հռիփսիմեի տաճարի վերաբերյալ, «Հայկական արվեստ», Հմր 1, Հին և միջին դարեր, ծանոթագրությունը՝ **Յու. Թամանյանի**, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974:

24. **Հակոբյան Պ.**, Էջմիածնի վիմագրերը Գալուստ Տեր-Մկրտչյանի վերծանմամբ, «Մշակույթ», 1990, Հմր 2-3, էջ 80-88:

25. [Հաղորդագրություն] Ս. Էջմիածնի Մայր տաճարի և Ս. Հռիփսիմեի տաճարի պեղումների մասին, «Էջմիածին», 1959, Է., էջ 20-21:

26. [Հաղորդագրություն], «Էջմիածին», 1979, Ե., էջ 4-6:

27. Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Հայաստանը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984:

28. Հայերէն բացատրական բառարան, հ. երրորդ-չորրորդ, կազմեց՝ **Ստ. Մալխասեանց**, Երևան, ՀՍՍՌ պետ. հրատ., 1944, 1945:

29. Հայկական ճարտարապետության պատմություն, հ. առաջին-երրորդ, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1996, 2002, 2004:

30. Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների, պրակ 1. Հայերեն արձանագրությամբ առարկաներ, աշխ. **Ե. Մուշեղյանի**, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1964:

31. **Հարությունյան Ա.**, «Բաժակ» գինու նվիրաբերման սկզբունքներ հայկական վիմագրերում, «Էջմիածին», 2011, Բ., էջ 121-129:

32. **Հարությունյան Ա.**, Նորահայտ արձանագրություն Ս. Հռիփսիմեի վանքից, ՊԲՀ, 2011, Հմր 2, էջ 192-199:

33. **Հարությունյան Ա.**, Եվս մի նորահայտ նվիրագիր Ս. Հռիփսիմեի վանքից, «Էջմիածին», 2013, Ժ., էջ 96-103:

34. **Հարությունյան Ա.**, Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 2016:

35. **Հարությունյան Վ.**, Էջմիածնի ճարտարապետական հուշարձանները, Երևան, «Հայաստան» հրատ. 1969:

36. **Հարությունյան Վ.**, Եկայք շինեսցուք, Ս. Էջմիածին, [1988]:

37. **Հարությունյան Վ.**, Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները (պատմական ակնարկ), Ս. Էջմիածին, 1996:

38. **Հարությունյան Վ.**, Պատմություն Ս. Էջմիածնի Մայր Աթոռի շինարարական գործունեության Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի գահակալության օրոք (1956-1980). Վերանորոգման և բարեփոխման աշխատանքներ Ս. Հռիփսիմեի եկեղեցում, «Էջմիածին», 1984, Գ., էջ 32-38:

39. **Հովսեփյան Գ.**, Կոմիտաս կաթուղիկոսի մի նոր արձանագրություն, «Արարատ», 1898, Ժ., էջ 441-442:

40. **Հովսեփյան Գ.**, Քարտէզ հայ հնագրութեան, «Շողակաթ Ս. Էջմիածնի» հայագիտական ժողովածու, գիրք Ա., Վաղարշապատ, Ս. Էջմիածին, 1913:

41. **Ղաֆադարյան Կ.**, Էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության, գիտական ժառանգություն, հ. 5, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», հրատ., 2007:

42. **Մանուչարյան Ալ.**, Քննություն Հայաստանի IV-IX դարերի շինարարական վկայագրերի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977:

43. **Մարտիրոսյան Ռ.**, Հռիփսիմեի տաճարը, «Էջմիածին», 1953, Բ., էջ 25-32:

44. **Մխիթարեանց Աբել արք.**, Երկերի ժողովածու, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 2009:

45. **Մելիքյան Է.**, Հռիփսիմե տաճարի վերակառուցումների բնույթը, «Գիտություն և տեխնիկա», 1978, Հմր 4 (176), էջ 22-27:

46. **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Պատմա-բանասիրական պրպտումներ, աշխատասիրությամբ **Պ. Մուրադյանի**, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 2010:

47. **Մուրադյան Պ.**, Հայաստանի վրացերեն արձանագրությունները (աղբյուրագիտական քննություն), Երևան, ԵՊՀ հրատ., 1977:

48. **Շահխաթունեանց Յովհաննէս եպս.**, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրությամբ **Ա. Տեր-Ստեփանյանի**, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 2014:

49. **Պետրոսյան Հ.**, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, «Փրինթինֆո», 2008:

50. **Սաղումյան Ս.**, Փակագրությունը հայ վիմագրության մեջ, ԼՀԳ, 1980, Հմր 3, էջ 73-91:

51. **Սարգսյան Լ.**, Հայաստանի նվիրատվական արձանագրությունները. (9-14-րդ դարեր), Երևան, «Էդիթ Պրինտ», 2007:

52. **Տեր-Մկրտչյան Գ.**, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ., աշխատասիրությամբ պրոֆ. **Պ. Հակոբյանի**, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 1998:

53. **[Տեր-Մովսիսյան] Մեսրոպ վարդապետ**, Էջմիածին և հայոց հնագույն եկեղեցիներ, պրակ Ա., Ս. Էջմիածին, 1904:

54. **Տերյան Վահան վրդ.**, Պատմական համառոտ ակնարկ Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի և Ս. Շողակաթի վանքերի և այդ վանքերում գտնվող կաթողիկոսական տապանագրությունների մասին, «Էջմիածին», 1961, Բ., էջ 29-38:

55. **Օրմանյան Մաղաքիա արք.**, Ազգապատում, հ. Բ., Ս. Էջմիածին, 2001:

56. **Еремян А. Б.**, Храм Рипсимэ, Ереван, Армгиз, 1955.

57. **Казарян А.**, Церковная архитектура стран Закавказья VII века. Формирование и развитие традиции, том I, М., 2012.

58. **Орбели И. А.**, Избранные труды, Ереван, изд. Академии наук Армянской ССР, 1963.

59. **Brosset M.**, Rapports sur un Voyage Archiologique dans la Georgie et dans l'Armenie, St. Petersbourg, 1849.

60. **Petrosyan H.**, Similarities between the Early Christian Armenian Monuments and Irish High Crosses in the light of New Discoveries, Studies in Language, History and Narrative, Journal of Indo-European Studies Monograph Series 61, Washington, 2012, pp. 169-180.

61. **Zaryan** and others, Documents of Armenian architecture. Vagharshapat, v. 23, Italia, Venezia, 1998.

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ՎԱՆՔԸ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2018

Հրատարակչական բաժնի տնօրեն՝ Տ. Արարատ քահանա Պողոսյան

Հրատարակչական խորհրդի անդամներ՝ Գևորգ եպս. Սարոյան.
Զաքարիա Ծ. վրդ. Բաղումյան,
Գարեգին վրդ. Համբարձումյան,
Արշակ Մադոյան,
Գևորգ Տեր-Վարդանյան

Լեզվաոճական խմբագիր՝ Սոֆիա Առուշանյան

Էջադրումը՝ Գոռ Գրիգորյան

Թուղթ՝ օֆսեթ 70 գր., չափը՝ 60x84 1/16,
ծավալը՝ 84 էջ + 8 էջ ներդիր, տպաքանակը՝ 300:

ISBN 978-9939-59-213-8

9 789939 592138

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ